



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Утисаръ

Ленъ - Юмсур

1904г

891.99.

U-39.



891-89
U-39

Ս Ե Յ Լ Ը Ն

8705
-6 NOV 2011

№ 8901.



Հ Թ Յ Լ Ը Ն

1001
3687



Ս Ե Յ Լ Ը Ն
U-39

Ա Ղ Է Գ Ս Ա Ն Դ Ր Ա Գ Օ Լ

Արագաշիպ-Տպարան Յոզն. Ափիենանի

1904

Дозв. Ценз., 30 Декабря 1903 г. гор. Тифлисъ.

Լ Է Օ Ն — Կ Ա Յ Ս Ր

(Հայկական աւանդութիւն)

1887 թ. ձմրան մէջն էր:

Պատահամար Մշու պաշտ, Խաւ (Հացիկ) գիւղում, հիւր եղայ մի առատասիրտ և աղնիւ մարգու տան: Ըստ գիւղական սովորութեան՝ գիշերն հաւարուեցան գիւղացիք մեր եղած օգայում և բսկսեցին դէտից-գէնից զրոյց տալ: Ապա թախանձեցին մի ծերունու, որ բարեբարոյ և գիւղացիներէից շատ բարձր էր երևում իր դատողութեամբ և թէ խօսակցութեամբ, մի հէքեաթ ասել: Ես ուշագրութիւնս լարեցի, բայց՝ ծերունի Փուրթօն, — այսպէս էր նրա անունը, — ժխտում էր, առարկելով՝ որ կարող էին այն գիշեր իրանց հիւր եղող հեռաւոր եղբօր (ինձ էր ակնարկում) խօսքերը լսել...

—Այ որգիր, — ասաց նա առայգ ձայնով, — ամեն օր ինձ էք ասել տալիս, դուք բոլորդ էլ գիտէք իմ պատմութիւնների թիւը, բայց՝ լաւ է որ այս գիշեր էլ մեր եղբօրը լսենք, նա էլ ինձպէս վարժապետ մարդ է:

—Աի՛է՛ (հօրեղբայր.), — ընդմիջեցի ես, — ես հէրեաթ ասելու շնորհից գուրկ եմ, ընդհակառակն ցանկանում եմ բեզ լսել: Քանի որ ինքզ վարժապետ ես եղել, ծանօթ ես գրականութեան, մեծ հիւրասիրութիւն արած կըլինիս, եթէ պատմես ինձ փոխանակ Շահ—Իսմայիլ, Թահար—Միքայայ և այլն շինծու հէքեաթների, որ ապականում են մեր պարզ կեանքը, սկսէք մեր մթին անցեալից, մեր ազգի աւանդութիւններից...

—Լաւ: Ներեցէք, եղբայր, իրաւ է, ես վարժապետ եղել եմ, բայց ոչ այնպէս՝ ինչպէս դու հասկանում ես, իմ գիտութեան սահմանը կարճ է և անցուկ, խնդրեմ ասէիր ինձ, ի՛նչպիսի հէքեաթներն են մեր կեանքից...

—Դաւիթ—Մհէր...

—Օ՛ր Դաւիթ—Մհէր, դա եօթը մասն է, եօթը գիշեր է պէտք...

—Աի՛է—Փուրթօ, — կանխեց երիտասարդ ուսուցիչը, — մեր հիւրը ցանկանում է հայի վրայ շինուած հէքեաթ լսել...

—Հասկանում եմ, — լուրջ կերպով պատասխանեց ծերունին, — բայց Դաւիթ—Մհէր հէքեաթ չէ, այլ ճշմարիտ պատմութիւն, մենք ունինք ժողովրդի բերանում այդպիսի անթիւ պատմութիւններ:

—Ուրեմն՝ — ասացի, — խնդրում եմ այդ անթիւ պատմութիւններից մինն ասել:

Ծերունին ձեռն երկարեց դէպի ծխատուփո,

լցուց իր շիրուխն և սկսեց ծխային հեղեղներ ժայթքելով խօսել.

—Ես բեզ կըպատմեմ կամ՝ Պարսից մեծ Աղամանը, կամ Ղէօն—Կայսր, կամ Շահ—Աբաս*) կամ ուրիշ:

Ծերունին պատմեց այն երեք աւանդութիւններն էլ, սկզբեցի յուշատետրիս մէջ:

Աի՛է—Փրթօն ծխելով սկսեց իր հետաքրքիր պատմութիւնը:

I

Այսպէս չէր այն ժամանակ մեր անրախտ Մշու գաշտը, նա ունէր մի հզօր տէր, որ նստած էր լինում ծմակ կամ Սասուն. երջանիկ էր ժողովուրդը՝ սրովհետև արևում էր հայ իշխան, փայլում էր մեր էլ վառ աստղը, որովհետև կռուի դաշտի մէջ ունէինք ակոյռան...

Մեր այս Խառ գիւղն այն ժամանակ մի փոքր բազար էր, նրա մէջ ապրում էին հարուստ հողագործներ և կրտսեր իշխաններ կամ Սեպուհներ. այն ժամանակ ծագկած էր մեր գիւղացի Ս. Մետրոպը, տուած էր հայ-մարդուն հայ-գիրը:

Մեր գիւղում ապրում էր մի շատ հարուստ հողագործ, Թօրիկ անուկով, նա ունէր եօթը սրդի. երկու մեծերը ծառայում էին երկրի իշխանին, չոր-

*) Չահ-Աբաս ապագրուած է 1895 թ. Տարազում և «Արաբի» վերջին համարում:

սըն հոգագործութեամբ պարապում, իսկ ամենափոքրը, ճարտար Վրթնէն՝ փողոցներն իրար էր անցնում, ազջիկների տիկիները խլում, մանուկներին ծեծում, պառաւներին բարկացնում, կռիւ ու խայտառակութիւններ սարքում:

Նա խիստ անհանդարտ, չարածճի, հպարտ, սրամիտ, բայց ոչ անգութ, անաչառ տղայ էր. մանկութեան ատեն իսկ տեսնում էր նրա մէջ ագնութիւն, եռանդ, խոր ընկերասիրութիւն և զըզուանք դէպի գծում գործեր:

Մեր պատմած ժամանակ՝ նա տասն և մէկ տարեկան էր. առաւօտ դուրս կըզար փողոց, խեղկատակութիւն, պառաւներին ծայրել նրա սովորական զբաղմունքն էին, որովհետև միայն կիւրակի օրերը թեսնում էր իր հասակակից ընկերներին, երանց հետ խաղում, բայց՝ ուրիշ օրեր սըր էին գնում նրանք, այդ Վրթնէն չըգիտէր:

Վրթնէն սկսել էր ձանձրանալ, գժկամակիլ անգործութեան դէմ, այդ իսկ պատճառաւ չգիտէր ինչպէս ձանձրոյթը փարատել.

— Սիրտս տրարում է, — ասում էր նա — ինչ անեմ, խալ չըկայ, ընկեր չըկայ, պառաւներին բարկացնել, անէծք ու հայհոյանք թափել տալ, ոչ, լաւ բան չէ, ազջիկներին լացացնել, տիկիները խլել... ոչ... մեղք է իրանից տկարին լացը տեսնել... գործել պէտք է, բայց ինձ ո՞վ է բանի տեղ գնում:

Փողոցի հարապատ որդին, անհոգ ծնողներից ազատազրուած ստամբակը՝ մի շարաթ անցկացրեց այսպէս մտմուռով:

— Էհ, մի բան անելու է, — եզրակացուց նա, — անգործ մարդի տեղը գերեզմանն է, անգործ մնալ նշանակում է մեռնել, ոչ, ես այդ չեմ անիլ և կըթողնեմ պառաւների օձիրը:

Ո

Մի կիւրակէ երեկոյ՝ գիւղի մանուկներից շատեր հաւարուած մի անկիւն, մտիկ տալով արծաթափայլ լուսնին, անամպ երկնակամարին, խօսում էին իրար հետ: Խաղերը տեղի էին տուել մանուկ տրամարանութեան, իրար հարցեր էին առաջարկում:

— Ա... որչափ սիրուն է լուսինը, — ասաց մի մանուկ, — կարծես մեր իշխանի զարդարուն արծաթէ վահանը լինի... տեսնես ի՞նչ նիւթից է և ի՞նչ է գա...

— Բնշուշտ արծաթ է...

— Աւելի կաթնէ լինէ է՞ բան արծաթ...

— Տաստ ասում է, — մէջ մտաւ Վրթնէ, — թէ սրին ու լուսինը քոյր ու եղբայր են, բայց՝ ոչ անգոր մարդիկ... Արևն ստեղծել է Մշու գաշտը և Սասնոյ սարերը, լուսինն էլ վարարում է Եփրատը:

— Հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեցին մի քանի մանուկներ:

— Հա՛, հա՛, հա՛, — արձագանքեց մի ուրիշը...

— Բնշու՛ ես ծիծաղում, — Արամ, — վրաւարուած

հարցրեց Վրթնէ վերջինից, — մի՞թէ սուտ եմ ասում, գու՛ր միկնոյնը լսած չե՞ս...

— Այն, Վրթնէ, լսած եմ, բայց՝ սուտ. պա-
ռաւի հէրեաթ է գա: Մեր վարդապետն ուրիշ բան
է ասում այդ մասին, գու՛ր եթէ լսած լինէիր նրան,
այդպէս չէիր ասիր: Արևն ու լուսինն Աստուծոյ
ստեղծածներ են, նոյնպէս և աշխարհը նրա ձեռա-
գործն է...

Այս ասելուց յետոյ՝ վեր կացաւ Արամ, գրպա-
նից մի կտոր ամուխ հանեց և ժպտելով սկսեց
պատի վրայ ոլոր մոլոր գծեր գծել: Մանուկներն
հետզհետէ ցրւում էին, միայն Վրթնէն անշարժ
կանգնած նայում էր...

Երբ գործը վերջացրեց Արամը, Վրթնէ նրա
թևից բռնելով հարցրեց.

— Գու՛ր այդ ի՞նչ գծեցիր...

— Ես գրեցի, Երամար, ոչ թէ գծեցի: Սրանք
գրեր են, սրանք խօսում են ճանաչողի հետ և կր-
պատմեն իրանց կարգալ իմացողին թէ «Վրթնէն
յիմար է, Վրթնէն ստամբակ է»...

— Հէյ, — գոչեց մանուկն ամօթահար և բար-
կաւթիւնից գունատած. — այդ ի՞նչ ես ասում, այդ
սև գծերն ահարգում են ինձ...

— Այն:

— Լաւ... բայց՝ գու՛ր Արամ, թեղպէս եռակի
յիմարն ի՞նչպէս սովրեց գծել զքեզ, ինչպէս գու՛
ր ես ասում, որ անարգում են ինձ...

— Ուսումնարանից հարցրու...

— Ուսումնարան... դա ի՞նչ բան է, ուտելիք
է, ի՞նչ է...

— Տխմար գու, ուսումնարանն ուտելիք չէ,
եկեղեցւոյ մօտի տունն է:

— Ա՛հ, Լաւ. բայց՝ ի՞նչպէս սովորեցար այդ-
պիսի հրաշալի բան... գի՛ծը խօսում է, կասե՛ն՝ ի-
մացողին հետ... թեղ ո՞վ սովորացրեց...

— Մենք ուսումնարան ենք գնում. այնտեղ
գալիս է Յովսէփ վարդապետը, սովորեցնում է:
Մեր ընկերների մէջ, միայն գու՛ր ես. փողոցական
ստամբակ, որ չես ճանաչում այդ դժերը, և թեղ
հետ չեն խօսում:

Վրթնէ մի ըստէ լռեց, ապա իր անելիքը ս-
րոշած մարդու պէս հարցրեց.

— Ո՞ր ժամանակ և երբ էք գնում սովորելու:

— Միայն կիւրակէ և տօն օրերն ազատ ենք,
միւս օրերն առաւօտից մինչև երեկոյ այնտեղ ենք
լինում:

Արամն այս ասելով հեռացաւ: Վրթնէ ձեռնե-
րը խաշաձև կրծքին դարսած, յուզուած, ակնապիշ
գրերին էր նայում, կարծես այդ անկանոն գծերն
ասում, բարոգում էին բացարձակ. «Վրթնէն յիմար
է, Վրթնէն ստամբակ է»: Մանուկն զգաց իր ա-
չերի թրջուիլը:

— Օ՛ — մրմուռաց նա ամօթահար հեծկտալով, —
այս ապաշխորն Արամն իմանայ մի բան և ես չի-

մանամ, նա ինձ անարգէ,— ինչո՞ւ վրէժխնդիր չեղայ,— այս գրեթէ անարգեն ինձ... սէ, անտանելի է, ես կըստփորեմ, կապացուցանեմ՝ որ ես յիմար չեմ, իսկ այս գրեթէ հէնց Արամի ձեռքը պիտի ջնջուին:

III

Քացուել էր առաւօտը. մի քանի նիզակաչափ բարձրացած էր արեւը, երբ Վրթնէ, ուսած աչրերով Արամենց տունը մտաւ: Նա տակաւին քնած էր, չէր լսում մօր ձայնը, որ խնդրում, աղաչում, ապա հայհոյում էր, բայց նա վեր կենալ չէր ուզում:

— Դու, նանէ, ասաց Վրթնէն ծոյլի մօրը,— մի կողմ կաց, ես կըզարթնեցնեմ. մօտեցաւ նրան, ցնցեց ուժգնապէս ասելով,— վեր կաց, Արամ, վեր կաց... սղջ գիշերը ես անըուն եմ մնացել գալրոցի սիրոյն, իսկ դու անհոգ ես և խեղճ մօրդ նեղադրուում: Վեր կաց գնանք, ես պիտի հաստատեմ յիմար շլինելու... ես պիտի սովորեմ:

Արամ՝ փնթփնթալով, գրեթէ լալով վեր կացաւ, հոգիւ կէս ժամում հագնուեցաւ, մօր ստիպումով սառը ջրով լուացուեցաւ, ապա կաթն ու սեր կերաւ և այնպէս ճանապարհ ելաւ:

Մի ընդարձակ դահլիճ էր այն, ուր կարգաւ նստած էին զանազան հասակի մանուկներ, իսկ սենեակի վերին անկիւնում, աթոռի վրայ, հոնի ճիւղտը ձեռքին, բազմած էր երիտասարդ արեգան:

Ներս մտնելուն պէս, Արամը խոնարհութիւն արաւ ուսուցչին և երկիւղած դէմքով անցաւ իր տեղը նստեց: Վրթնէ շմորած, տղշած, մի տեսակ կեղծ ժպիտով շուրջը նայեց. այնտեղ էին իր բոլոր փոփոցական ընկերները, նստոտած լուռ ու մունջ, ձեռներին բռնած մագաղաթի գալարուն տերևներ, ոմանք էլ հաստ գրքեր, մի քանին վարդապետի առաջ ծնրադրած դաս էին ասում:

Մի բոպէ պատանին սառած մնաց:

— Այս բոլորն այստեղ են,— մտածում էր նա,— իրաւ որ միակ յիմարն ես եմ եղել... բոլոր՞ ը, բոլորը սովորում են... ես եմ եղել խեղճ պառանների, աղջիկների հոգեհանը... Օ՛, ափսոս իմ կորցրած անգին ժամանակ...

Վարդապետը նկատեց նրան, որ մէջտեղում կանգնած ինչ անելը չէր իմանում. ոտրի ելաւ, բազրութեամբ մանկան մօտենալով՝

— Ո՛ւմ որդին ես,— հարցրեց:

— Հասօենց Թօրիկի...

— Լաւ, ինչո՞ւ ես եկել, ի՞նչ ես ուզում...

Իսկոյն ազմուկը զազարեց, երեխաներից ոմանք զտունի ծիծաղով, ոմանք բարեկամական ժրպիտով, ոմանք հետաքրքիր ուշադրութիւնները լարած սպասեցին:

— Հայր սուրբ,— ասաց Վրթնէ Արամը ցոյց տալով,— դու սրան սովորեցրել ես այնպիսի խաղեր, զրեք եմ ասում, որ խմացողի հետ խօսում են:

—Այն,— ժպտալով պատասխանեց վարդապետը.— Ի՞նչ է եղել:

—Պա ինձ նախատեց, գրեց պատի վրայ՝ «Վրթնէն յիմար. Վրթնէն ստամբակ է»:

—Հա՛, լաւ,— ձեռք նրա գլխին դնելով,— Տրամա ինձ մօտ գանգատելո՞ւ եկար, պատժե՞մ նրան, որ միւս անգամ չանի...

—Ո՛չ,— միջամտեց Վրթնէ աշխուժով և ուսուցչի ձեռն իր շրթունքին մօտեցնելով,— Էս եկել եմ, խնդրե՞մ եմ, որ ինձ էլ սովրեցնես միևնոյն բանը. ո՛չ թէ Արամին պատիժ եմ ուզում... ո՛չ, ո՛չ: Ես ուզում եմ ցոյց տալ գործով իմ բոլոր ընկերներին, որ Էս յիմար չեմ, Էս ստամբակ չեմ, էլ չբարտի կտորեմ պառաւների կճուճներում ժողոված ձուաները, չբարտի խրտեցնեմ նրանց թուխս ընկած հաւերը, չբարտի լացացնեմ մատաղ աղջիկներին, այլ՝ պիտի սովորեմ այն՝ ինչ որ սովորած է ծոյլ Արամը, որ չի ամաչում մինչև կէս օր քնել, որն Էս բռնի վեր եմ կացրել, բաշ տուել մինչև այստեղ...

—Ա՛հ, դու պատուական փոքրիկ, դու յիմար չես,— լուրջ կերպով պատասխանեց ուսուցիչ արեգան,— քո փոքր գլխիդ մէջ, մեծ իմացականութիւն, այս սիրուն աչքերիդ մէջ ահագին հասողութիւն, մատաղ կրծքիդ տակ մի հզօր առիւծ է ննջած... Ե՛կ, սրգեակ, Էկ նստիր հէնց իմ աթոռի առաջ, ամփոփ ուշադրութեամբ լսիր և մտիդ պահիր ա-

տածներս: Այդ Արամը, որ քո պատուի զգայումն է գրգռել, մեր ամենածոյլ, ամենայետին աշակերտն է:

—Օ՛, հայր սուրբ, Էս շուտով նրան պիտի ամաչեցնեմ, պիտի հաստատեմ խտրապէս ինչ լինելու...

—Պու մեծ մարդ կլինիս՝ սիրելի մանուկ:

Արամն ամօթից կարմրեցաւ, աչքերը խոնարհեց, Վրթնէի վես ու յաղթական հայեացքն ընկճեց նրբան: Նա խիոյն բազմեցաւ վարժապետի ցոյց տուած տեղը...

IV

Թօրիկ եղբայր,— այս անցրից մի բանի օր լետայ՝ ասում էր վարդապետը Վրթնէի հօրը,— Էս չունիմ այդպիսի մի ուրիշ աշակերտ. վերին աստիճանի ուսումնասէր, անգուլ գործող մանուկ է նա, սովորում է անհաւատալի արագութեամբ:

—Յովսէփ հայր,— պատասխանում էր Թօրիկը,— քո ասածին կրճաւատամ, Էս ինքս էլ ուսման սիրահար եմ, շատ էի սիրում քո վարժապետ կարճիկ Մետրոպոլին, յափշտակութեամբ լսում էի նրա վառվառն, իմաստահոծ խօսքերը, և պահում մըտքումս... ուրեմն պարզ է, որ Էս անհասկացող չեմ, բայց՝ անբախտ մարդ եմ: Երկու մեծ որդիքս Մետրոպի մօտ էին սովորում. անպիտաններն ուսումը կխտրատար թողին, սուր ու վահան խիցին՝ իշխան Վատակին ծառայելու համար Սասուն գնացին. իմ

որպոց բնական հակումն է գլինակրութիւն: Միւս շորտին էլ յանձնեցի զանազան վարդապետների, հոյնպէս ոչինչ չըստվորեցին, նրանք ևս թէ՛հ հոգա- գործ, բայց՝ պատերազմի գաշտում մի մի վիշապ- ներ են՝ ինչպէս ասպցուցեցին վերջին պատերազ- մում... միթէ այդ եռանդալի փոքրը մարդ կրգառ- նայ, սչ. նա բոյորից եռանդալի, խրոխտ զինուոր պիտի լինի բաջերի հրապարակում...:

— Հաւատա՛ թօրիկ, ասածդ չեմ ժխտում. գու- ցէ լաւ զինուոր, սակայն յայտնի գլխի տէր մարդ պիտի գտանայ: Այն շարածճին, որ գիւղն իրար էր անցնում, այժմ մի հեզ գառն է գառել: Նրա յան- կարծական փոփոխութեան շարժառիթն հպարտու- թիւնն եղաւ, և այդ ազնիւ հպարտութիւնը նրան պիտի տայ իսկական բարձրութիւն: Մի իննայիր նրան մնազաղաթ, վարժութեան թերթեր, գու- կո՛ւնենաս և՛ ուսեալ և՛ ազնիւ սրբի:

— Հայր սուրբ, շատ մեծ գազափար ունես գրա մասին:

— Երէկ, թօրիկ, ես միւս սենեակն էի ան- ցած, գռնից լսում էի: Մի տեսնէիր ինչ էր անում այն խեղճ Արամին, որ վիրաւորած էր նրան. — Ա- րամ, դու ինձ յիմար գրեցիր, — ասում էր Վրրթ- նէն, — գու ևս յիմար եղել, որ ոչինչ չես իմանում, սչ մի օր գասերդ չես սովորում, փոքր ժամանա- կից յետոյ՝ ես վրէժինդիր պիտի լինեմ, իմ խեղճ ընկեր, գիտես, գասերդ սովորեցնելով կըլուծուի

վրէժս... — Տեսնում ես, թօրիկ, սրանք ինչպիսի վեհանձն խօսքեր են: Կրթենք այդ մանուկը, բա- րեկամ, կրթենք՝ մենք կըստանանք մի կորովի մարդ, և եթէ ապագայում զինուոր դառնայ, կարող է պի- տանի և հասկացող լինել:

— Ես դէմ չեմ, հայր սուրբ, կրթենք, ես մա- զաղաթի գին և վարձ կըվճարեմ առատապէս, բայց ես ծածկեցի իմ կասկածը. ճ, որչափ ցանկանում եմ՝ որ շքմանի եղբայրներին...

— Իմ բարի հայր, — ասաց Վրթնէ յանկարծ հօր ոտներն ընկնելով, — թնոյ Լուսաւորիչ վկայ լի- նի, որ ես տիտի սովորեմ... Ես այս անկիւնը կանգնած լսում էի քս և իմ պաշտեցի վարժապե- տիս խօսակցութիւնը, երգուել եմ, ես պիտի ապա- ցուցանեմ եղբարոյ Արամի մօտ, որ ես նրա կար- ծածի հակառակն եմ:

— Ուրեմն, Վրթնէ, — մանուկի ճակատն համ- բուրելով հարցրեց հայրը, — ինչպէս երևում է, դու բարկացած ես ընկերիդ դէմ:

— Ամենիկն, Աստուած շանէ, որ այդ տկարու- թիւնն ունենամ:

— Ուրեմն՝ չէս ատում նրան:

— Ատել, սչ, չէ՞ որ նա եղաւ պատճառ... Յաւում եմ այդ խեղճ ընկերիս վրայ, որ մեծախօս է և գերազոյն տխմար... որ չէ՛ կարող իր խօսքն յարդել, չունի իր սրտում գոնէ դոյզն ինչ պատուի գլացում...:

— Գնւ վեհանձն սրգեակ, — յուզուելով Վրթնէ-
ին գրկեց Թօրիկը, — գնւ ստուգիւ լաւ մարդ պի-
տի լինես:

— Լաւ մարդ, — կրկնեց վարդապետը, — բայց
հպարտ:

— Մարդն աւանց հպարտութեան ինչ է ար-
գեօք, հայր սուրբ, — պատասխանեց մանուկը, — ե-
թէ հպարտութիւն անուանածդ ինձ ուսումնարան
տարաւ, Օ, կարծեմ շատ լաւ բան է:

— Այն, շատ լաւ, եթէ քո սնով գործածուի...

V

Անցան օրեր, ամիսներ, Վրթնէն անյազ և
սիրայօժար անձնատուր եղաւ ուսման: Այլ ևս նա
չէր ստամբակ և գատարկագորտ. նա մի ծանրա-
բարոյ, ամօթխած, բայց ոչ երկչոտ մանուկ էր,
սիրում էր ուսումով գրագուել, սոխորել ու սովորել:
Նա երազին մէջ անգամ իր գասերի հետ էր, նրա
մշտնջենական քաղցր և սիրելի մտածմունքն էր
ուսմունքը: Նա շուտով Յովսէփ վարդապետի սիրե-
լին գարծաւ: Արժանընտիր ուսուցիչն ոչինչ չէր
խնայում. մանուկն աճելով ու գորանալով ուսման
անդաստանում, գերազանցեց իր բոլոր հասկակից-
ներին, իսկ ծոյլ ու անփոյթ Արամին՝ անյիշաշար
ուզով գասերն էր սովորեցնում, վերջինս էլ ան-
պայման խոնարհում էր Վրթնէի հեգինախուլութեան
առաջ:

Վրթնէի ուսումնարան գնալուց մի տարի յե-
տոյ, էլի մի սիրուն երեկոյ՝ մանուկներն հաւար-
ուած էին հէնց նայն պատի տակ, որի վրայ Արամ
գրել էր... խօսում էին զանազան նյութերի վրայ,
իսկ Վրթնէն յափշտակութեամբ մի բանիսներին
պատմում էր ազգային պատմութիւնից, որ սովո-
րել էր իր հայրենանուէր ուսուցչից:

Մանուկ օւնկնդիրներն հիանում էին ու գո-
վարանում նրա ճարտար լեզուն ու բեզմնուտր
տաղանգր... Գրեցի զայն զն մ' յմարտնս Կարամուն

1001
3882

— Վրթնէ ջան, — ի վերջոյ ասաց Արամը, —
զու մեր վարժապետին հաւասար կարող ես պատ-
մել ու խօսել. հիանալի մարդ պիտի լինես:

— Ո՛հ, Արամ, — պատասխանեց նա մի տե-
տակ ջգային սարսուռ գգալով, — ես յիմար և ստամ-
բակ եմ:

— Ե՛նչ, ո՞վ է ասում... Երբ ինչպէս Կարամուն

— Այս անխօս պատը քո կողմից, վեր նայիր,
չորջ մի տարի առաջ ամուխով է գրուած... բայց
հաւատարիմ է նա, պահել է սե արձանագրութիւնը:

Մանուկները խառնուեցան արձանագրութեան
չուրջը:

«Վրթնէն յիմար է, Վրթնէն ստամբակ
կարդային նրանք: Ս. Կ. Ա. ՄԱՅՈՒՅԷՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ
Ս. Կ. Ա. ՄԱՅՈՒՅԷՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

— Օ, — հառաչեց Արամը՝ յանկարծ անցեալն
յիշելով, — այդ իմ գիրն է:

— Լրբութիւն է այդպէս գրել, ջնջել, գոչե-

ցին մանուկները, — չէ կարելի անարգել Վրթնէի պէս մի աղքատ ընկերի՝ սրի նմանը շունկնը...

— Ո՛հ, մի ջնջէր, — վճռարար գիմադրեց Վրթնէ, — դա իմ պարծանքն է, այդ արձանագիրն ինձ մզեց Յովսէփ հայր սուրբի մօտ: Չբղէտը է ջնջել, այլ պահպանել... իսկ դու, իմս Արամ, փոխանակ յո գրածից ամաշիու, աշխատիր գերազանցել ինձ, որպէս զի՛ արգարացի նկատուի վարմունքդ:

— Օ՛, — գիտեց մի մանուկ, — դա կարող է անտիպար համարուել և ոչ բեզ մրցակից...

Արամը տխրութեամբ գլուխ կախեց:

VI

Չորս տարիներ սահեցին, Վրթնէ ուսումնարանում առաջին աշակերտ, ուսուցչի օգնական (խայֆայ) էր եղած, նա սովորում էր և սովորեցրնում. կեանքից նրան ոչ մի պատկեր չէր հետաքրքրում, միայն գրիչն ու գիտութիւնն յափշտակած էին մանուկ սիրտը... մագաղաթ թերթեր սպառւում էին եղէգ պրչի տակ, մաքուր օրինակւած վարժութեան թերթեր, թեթև գրքեր ծաւալւում էին խրճիթներում:

Վրթնէ թէպէտ տասն ու վեց տարեկան եղաւ, աւելորդ էր այլևս ուսումնարան գնալը. քանի որ հէնց իր ուսուցիչը խորհուրդ կըտար Գուրի կամ Վաղարշապատ գնալ, կատարելագործել մայրենի լեզուն. բայց՝ քանի որ Թօրիկն արգելք էր

լինում, պատանին շարունակում էր սովորածը կրկին սովորել, ուսման հետ ժամանակ անցկացնել:

Այդ միջոցում կրակապաշտներն յարձակուեցան հայտոտան, ամեն գիւղ ու բազար մունետիկներ ընկան, գէնքի հրաւիրեցին բաջ վիւնուրներին ու կամաւոր նահատակներին: Վրթնէ ցանկացաւ նաև քաջի անուն ժառանգել, ուստի իր մեծ եղբօր մօտ գնաց, մտաւ Խուլթի—Սասունի գնդի մէջ: Նա շուտ սովորեցաւ հեղաբէն նիզակ ճօճել, սուր վարսել, վահանով մահաբեր հարուածներ վանել, ուստի ամբողջ մի տարի բանակի մէջ իբրև կտրիճ, շարքաշ, հաւատարիմ զինուոր պատերազմեցաւ, արժանացաւ Սեպուհ—Իշխանի գրագիրը լինելու պատւին: Սակայն պատերազմը վերջանալուն պէս ստիպուեցաւ վերադառնալ գիւղ. աւանդ, այնտեղ շրջապատ իր պաշտած ուսուցչին, մեծարելի հոգևորականը կոչուած էր մի մեծ վիճակ կառավարելու և արժանացած էր եպիսկոպոսութեան վսեմ պատւին: Չբղտաւ իր լաւ ընկերներից և ոչ մէկին, սմանք Մամիկոնեանների Ս. Ղազար (Առաքելոց վանք) յայտնի մենաթամն էին քաշուած յայտնի գիտնականների մօտ, սմանք Աթէնք, Եգիպտոս, Բիւզանդիոն իջած, իսկ մեծ մասն արդէն սկսած էին զանազան պարսպամունքներ ընտրել: Նա գիւղում միայն անկործ գտաւ իր հին ընկեր Արամին, որ գպրոցից գուրս գալով պարապ ման էր գալիս:

Արամին մենք մասնաւորապէս ենք ճանաչում: Նա մանկութեան ժամանակ ծոյլ, դանդաղ, գրտից խաղաղ բնաւորութեան տէր ու խելացի մանուկ էր երևում, սակայն հասակն առնելուց յետոյ՝ դարձաւ մի դաժան, կոպիտ, անաւօթ որիկայ և ծածուկ աւաղակ: Այս էր նա Վրթնէի վերագործին:

Երկու հակառակ ընկերները մի բանի օր իրար հետ լաւ տեսնուեցան, որովհետեւ Վրթնէ սիրում էր գաշտերը շրջել, խսկալ բնութեան սքանչելիքներին, իր ստացած գիտական պաշարի մասին. Արամ առ հրեութապէս ընկերացաւ նրան, սակայն՝ ի մեծ ցաւ Վրթնէի, ստեպ անպէտք և անհամ խօսակցութեամբ վատնում էին ժամեր: Փոքր առ փոքր հիասթափուեցաւ Վրթնէ, նա յոսի գծեր էր նշմարում իր ընկերի ճակատին ու սրտին բանպակուած:

Վատ հակումներ նշմարելով Արամի հոգւոյն մէջ, աշխատում էր մի հիմնաւոր ապացոյց գտնել և խոսքառ հեռանալ մանկութեան անուղղայ ընկերից, որ իր կրթութեան ու դաստիարակութեան շարժառիթն էր եղած:

Առթիւն ինքնին ներկայացաւ մտերմութեան պիմակով:

Մի օր Վրթնէ, իր սովորութեան համեմատ, մի հատոր գրած թիւին տակ, շտապում էր գաշտ

գիտը, կարգալ առանձնութեան մէջ, ապա ինքն իրան համար տալ թէ ինչ նոր բան սովորեցաւ, երբ նկատեց Արամի շտապով իր հոտից գալը:

— Ա՛հ, — հառաչեց Վրթնէ, — էլի եկաւ խաթաւաւաւ, չըպիտի կարողանամ կարգալ... արգիօք երբ այս դատարիպոքրա, անուղղայ ընկերից պիտի ազատուիմ... խեղճ տղայ, ինքն եկաւ «խմւար և ստամբակ»:

— Այ մարդ, — առաց Արամ հե ի հե նրա հոտից գրեթէ վազելով, — այնպէս արագ հեռանում, դնում ես՝ որ կարծես հոտէդ մոխրապաշտ օղարսիկ է ընկել... Սղասիր, միասին երթանք:

— Գիւզր ձանձրալի է: Դատարկ խօսակիցներէց էլ չեմ ախորժում: Ուստի խլում եմ մեր անմասն հեղինակներից մինի գործն, շտապում գաշտ:

— Է՛հ, Վրթնէ, միշտ ինչ ես հակամուտ այդ հասարակներից, չես ձանձրանում կարդալուց... Հա, մայրդ ասում է դիշերներն էլ ես կարգում:

— Այն:

— Զարմանալի ճգնաւոր գուրս պրծար, Վրթնէ: — Ետեկամ, հոպին կրթելի ու զարգացնելը ճգնել չէ:

— Ես ճգնաւորութիւն չէ, ինչ է... երբ բնանալ ուղեմ, վեր կառնեմ մի պիքք, կրջանամ կարգալ. ասա հոտարն ընկնում է, ես էլ խոր բնավ սկսում եմ խամփացնել...

— Ո՛չ, ես քուն չունիմ... խիստ թեթիկ է

րունս: Բայց, — մըմնջեց Վրթնէ ախուր ժպիտով, — ուսումնասուէր Արամ, յիմար Վրթնէին, ստամբակ Վրթնէին, այժմ ինրդ ես ճգնաւոր ասում: որքան անկայուն է մարդկային բախտը, լոյսը խաւարում է, մէզը շամանգազի փոխարկում, մին բարձրանում, միւսն իջնում է հորիզոնից...

— Վրթնէ, — ասաց Արամ՝ Վրթնէի միտքը շիմանալով, — դու վարդապետ լինելու արժանի ես, բարեկամ, մի նեղանար եթէ քեզ ճգնաւորի տիպաս են տալիս...

— Իսկ դու, դու, Արամ, չես ասում թէ ինչ պիտի դառնաս. թռան մանկութեան անհոգ օրերը, մնայլ ներկայի ետեից սպառնադին պիտի ժամանէ անորոշ ապագան: Ուսում չունիս, արհեստ չունիս, հողագործութիւնից խոյս կրաստ, ուրեմն՝ դու, Արամ, աստ ինձ համարձակ, դու ինչ պիտի դառնաս:

Վրթնէ, — ժպտելով պատասխանեց Արամը. — ես արդէն որոշած էի գիմաղաղերձ երևալ և պատմել քեզ իմ ինչ լինելու...

Վրթնէ, ուշագրութիւնը լարեց:

— Իու, շարունակեց Արամը, — հաւատարիմ և գազանապահ ընկեր ես... Վրթնէ, կարելի է քեզ ամեն բան ասել և պիտի ասեմ առանց անվստահութեան: Լսիր, ես ու երկու ուրիշ հասակակից ընկերներ գտած ենք մի աներևոյթ, բայց փառաւոր գործ...

Ի՞նչ գործ, — հետաքրքիր ընդհատեց պատա-

նին, — այդ ինչ բան է...

— Մենք գիշերները զիւզը ման կրգանք... գնների առաջ մտուցուած իրեր, մեղուատներից փեթակներ...

— Գողանում էք, — ընդհատեց Վրթնէ սարսափով:

— Ի՞նչ կայ որ՝ շատ գիւրբին գործ է... նաև երբեմն էլ յարձակում ենք ոչխարների հօտերի վրայ... մի տեսնես ինչ փառաւոր խորոված ենք շինում: Գպրեվանից գինի, Առազից խաղող և ուրիշ մրդեր կրելով՝ կանոնաւոր խրախճաններ ենք սարքում:

Վրթնէ կայծակահարի պէս անմուռնչ արձանացաւ, յուզուած, ցաւած, քստմնած լսեց ապիրատ ընկերի պատմութիւնը:

— Իու, Արամ, — վերջապէս հարցրեց նա, — առանց խղճի խայթի գողանում ես:

— Խիղճն ինչ է:

— Ափսոս, հազար ավսոս, — շնչեց պատանին դայրացած հրեշտակի դէմքով, — դու իմ զարգացման պատճառ, դու՛ անարատ Յովսէփի աշակերտ, դու այն հրեշտակակրօն մարդու շնչով սուղուած ծագիկ, դու՛ Արամ, գոյ և աւագակ, ո՞չ... չեմ կարող հաւատալ, միթէ այդքան շար ես, միթէ սուրբ ուսուցչիկ և ոչ մի խօսքը չէ գրոշմուած սրտիդ մէջ:

— Լսիր, Վրթնէ, — ասաց անամօթ, անզգայ պատանին, — ես ճշմարիտն ասեցի քեզ... և տես-

նում եմ, որ դու էլ անգործ ես...

— Առաջարկում ես քեզ ընկերանայ, ապիրատ, սանձահարկի վայրահաշ լեզուդ... Օ՛, մի խօսիր, ես անընդունակ եմ քո արհեստին...

— Յայց... պատմում են՝ որ քաջ զինուոր ես եղել:

— Այն, ես քաջ զինուոր եմ, կուեկ եմ հայրենիքիս համար...

— Ուրեմն էլ ի՞նչ, վախենում ես մեզ ընկերանալուց:

— Արամ, անասնորարոյ պատանի դու, ես քաջութիւնից ոչինչ զանց չեմ առել, ես սիրով կրմեռնեմ կուեի դաշտի մէջ քաջի անուն ժառանգելով, բայց... գողութիւն, աղքատի պատան յափշտակել, տներ կործանել... երբէք, անմիտ դու:

Լսիր, վերջին անգամ խորհուրդ կըտամ քեզ, խեղճ տղայ, այդ շար ճանապարհից յետ դարձիր, գրա ծայրը դահճի տապարին տակն է: Փու, խեղճ ընկեր, դու երբեմն ինձ ստամբակի Լիր ասում, այժմ իշխանական սամոյրի պէս ես հագնում աւագակի արիւնտտ հ անարգ անունը... հեռացիր, Արամ, հեռացիր՝ լնկրում եմ, այդ անարգ արհեստից յետ դարձիր՝ բարեկամ, ճակատի քրտիներով աշխատիր քո հայն ու պահիր անունդ անապարտ...

Արամն առանց ամաչելու լսեց ընկերին հ ծիծաղելով ասաց.

— Փառաւոր բարոզիչ ես, Վրթնէ, ախսն որ ես չեմ կարող համոզուել:

— Ես իբրև ընկերդ, իբրև բարեկամդ վերջին անգամ խորհուրդ կըտամ, քանի գեռ ուշ չէ, քանի չէ խորացել վէրբը:

— Լաւ, Վրթնէ, այդ լծնդ մնայ, ինքդ ինչ ես չիմեցու:

— Ե՞ս... Բիւզանդիոն կամ Ալեքսանդրիա պիտի երթամ:

— Եւ ի՞նչ չիմեցու...

— Այրատ գլուխս հարտացնելու...

— Ես էլ, Վրթնէ, կերթամ փարթամ աւաներ պատարկ քսակս լցնելու:

Երկու ընկերները խորին սառնութեամբ բաժանուեցան: Արամը արագ արագ վերադառնում էր գիւղ, Վրթնէ խորին տխրութեամբ, նայում էր նրա յետից մտածելով:

— Ճակատագիր է արդեօք, եթէ ոչ մեծաբանութեան պատիժ, սա ինձ յիմար հ տամքրակ էր անուանում, ինքը տխմար, աւագակ դարձաւ, խօսքով վիրաւորեց ու բարձրացրեց ինձ, գործով ինքն իրան գլորում է, թշուառ գլուխն է կռակաւում դահճի անագորոյն ցուրտ սաղկրին... Տէր, ազատիր դրան...

VIII

Տխուր, յուզուած Վրթնէն վերադարձաւ տուն: Երեկոյեան նրան հայրը իր մօտ կանչեց հ ասաց.

— Վրթնէ, գաւակս, արդէն սուտուդ առար,

չափահաս ու խելացի մարդ գարձար, ասն ինձ, որդեանկ, այժմ ի՛նչ պարապմունք պիտի ընտրես:

— Տայր իմ, — պատասխանեց պատանին նրա ծնկներին փարելով, — ես ինքս ուզում էի քեզ խոտովանել. շնորհակալ եմ, որ այդ մասին սկսում ես հարց ու փորձ անել:

— Անշուշտ պիտի հարցնեմ, զաւակս, տեսնում ես, որ ես, եզրարբոց ու ծառաներն արիւն քրտինք թափելով աշխատում ենք... Դու փոքր չես, բարբ սեզմես՝ աւագ կրգարձնես, ջղերդ ամուր են երկաթի պէս. կարծեմ սուր շարժելու չափ էլ, ընդունակ ես մանկազ ճօճելու:

— Այդ ես կարող եմ, հայր իմ, բայց կոչում չունիմ...

— Ինչպէ՞ս թէ կոչում չունիս...

— Տայր, ես ցանկանում եմ ուսումնա շարունակել:

— Դաշտերն ու գետափը չափելով, ապաշնորհ պատանի:

— Ո՛չ, խնդրում եմ՝ սր թոյլ տաս, քո ծախքով ուղարկես ինձ Յիւզանդիօն, կամ Աղէքսանդրիա, ուր գնացին իմ բոլոր ընկերներս. չուտով կրգառնան հեղինակներ, թարգմանիչներ, իսկ ես աննշան պիտի կորչեմ այստեղ... Ինձ համար չեն հարստութիւն, հրջանկութիւն, ընտանեկան կեանք... Ո՛չ, ես յափշտակուած եմ երկու գաղափարով. ինձ թոյլ տուր սրով փայլել աշխարհի մէջ, մտնել անմահ քաջերի կաճառ. կամ թո՛ղ, որ գրչով անմահ

հայնել կարողանամ անուճս...

Թօրիկ ապուշ հայեացքով նայեց պատանուն ու մրմրաց.

— Իրա՛ւ՝ որ շատ կարգացողը կրխելագարուի: Մտիկ այս ցնորամիտ անպիտանին ինչեր է քարոզում... անմահութիւն. անառակ, հոգածինն ինչպէս կանմահանայ. եթէ Արամ — քաջ գառնաս, եթէ Լուսաւորիչ գառնաս՝ գերեզմանն է բաժին: Քեզ ասում են՝ բաւական է ինչ որ սովորեցար, հագիր պապենական տրեխը, ձեռք առ հայրական մաճը, գաշտ լիջիր եղբայրներիդ հետ գործելու: Ախար նրանք իմ հոգին են հանում. — հայ, Վրթնէն պարապ ման կրգայ, հայ ոչինչ չի շինում, վազը մեր տունը պիտի քանդէ և այլն և այլն»: Ես, որդի, մինչև երբ լռեցնեմ նրանց, բաւական է: Չեմ կարող քեզ Յունաստան ուղարկել, այդ մտրիցդ հանիր, վազը լուռ ու մունջ գաշտ արի, մեզ հետ գործիր: Արդէն այս աշնան քեզ կրնչնեմ մի լաւ ազգկայ հետ և կրվերջանայ ամեն ինչ...

— Աղբրսում եմ, հայր, թոյլ տուր ինձ ազատ գործել, փառք Աստուծոյ, եղբայրներս հասած կատարեալ մարդիկ, գործում են քեզ հետ: Ահագին հարստութեան տէր ես, էլ իմ աշխատութիւնն ինչ պիտի լինի, թո՛ղ ես գնամ ուսումնա աւարտեմ...

— Մի անգամ ասածն էլ չեն կրկնում. վազը գաշտ կրգնաս, աւելի ոչինչ:

— Տայր իմ, — լալազին՝ նրա ձեռներն համբու-

րելով, ասաց Վրթնէն— ենթացրէ թէ ես չեմ ծընած...

— Խօսք պէտք չէ, — պատանուն մի կողմ հրելով՝ բարկացայտ սրտաց Թօրիկ. — եթէ երկարացնես՝ մի քանի ապտակ կուտես: Լաւ սուխրեցիր ազատ մանկալ: Քո կամքով ուսման գնացիր, ուղարկեցի, զինուոր գրուեցար՝ լռեցի, հիմա էլ Յունաստանը՝ մնաց չափշփելու, ես թոյլ չեմ տայ հեռանալու և չըպիտի հեռանաս:

Վրթնէն սորի կանգնեց, արտասուքը սրբեց, ուղղակի հօրը նայելով, ասաց.

— Հայր, ես անպատճառ պիտի գնամ...

— Բայց ես, անպիտան, կըրոպանեմ քեզ:

— Սպանիր: Բայց՝ քանի որ կենդանի եմ, կրկնում եմ, պիտի գնամ Յունաստան, կատարելագործելու ուսումս...

Թօրիկ համբերութիւնն հատաւ, գայրացայտ սորի ելաւ, մի քանի ուժգին ապտակներ տալով պատանուն գլխեց սորին տակ:

Վրթնէն անտրտունջ պատիժը կրեց. երբ Թօրիկ ձեծը բաւ համարեց, սորի ելաւ, առանց մի կաթիլ արտասուք թափելու գէպի դուրս գնալով.

— Ես, հայր իմ, — ասաց համարձակ, — ահա յայտնում եմ, անպատճառ պիտի գնամ. պատիժ, բանտարկութիւն ինձ չեն կարող բնկծել...

— Այն ժամանակ, անառակ, փողով չեմ բռնել...

— Ահա, — կտրովի բազուկները ցոյց տալով, —

որանք պատրաստի փող են և անսպառ զրամագրուիս. սրանք յօժարակամ կըպործեն և անունդ կըմատակարարեն:

IX

Վրթնէի մայրը միջնորդ հանդիտացաւ հօր և սրղու մէջ, բայց նրա բոլոր աղերսներն իղուր անցան, իր ասածի, յամառ Թօրիկն արդէն նշանած էր Վրթնէին մի հարուստի աղջկայ հետ և ամեն օր բռնի սրղուն դաշտ էր ուղարկում. Վրթնէն համոզուեցաւ որ՝ չէ կարելի յոյս գնել մօր միջնորդութեան, կամ իր աղերսների վրայ, քանի որ հայրը պնդում էր իր ասածին, նա կազմեց իր ծրագիրն և մի գիշեր իրագործեց ամենայն յաջողութեամբ:

Խաղաղ սան մէջ ննջած էին բոլորը. Վրթնէն միայն արթուն, սրտատրոփ սպասում էր՝ անկողնի մէջ շուռ ու մուռ գալով. երբ կէս գիշերը մօտեցաւ և ննջողների խամփոցը մի տեսակ նուազահանդէս յօրինեց: Լսիկ վեր կացաւ, մթնութեան մէջ հաղնուեցաւ, անձայն մօտեցաւ լուսամտի առաջ ննջող ծնոգներին, որոնց վրայ կաթնած էր լուսնի մի կաթնաթոյր սիւնը, մի քանի բոպէ ակնապիշ հայեց, ապա խորապէս յուզուած մրմնջաց հազիւ լսելի ձայնով.

— Ո՛հ, զու աղնիւ և պարզամիտ հայր, անհեռատես ու երջանիկ հայր, յամառ, գորովագութ,

սրգեսէր հայր... Մնաս բարեան... և դու պաշտելի մայր, մնաս բարեան, սէ, ես կոչում չունեմ շինական լինելու, ինձ նեղ են թուում մեր խրճիթները, իմ մէջ եւ է գալիս մի վսեմ փառասիրութիւն... — անմահ անուն թողնել: Մաճն ու խաղաղ կեանքը չեն կարող ինձ տալ այդ մեծ բաղձանքը, դըրանք մեր ժամանակում գրչին ու սրին են յատուկ: Մնար բարեաւ, զնում եմ, կամ գրչով հերոսներ անմահացնելով պիտի անմահանամ, կամ սրով յաղթական դռները խորտակեմ, մեծ անուն թողնելով ձեզ էլ փառաւորեմ... Ո՛հ, սիրտս մորմորում է... հոգիս տոչորում է, բայց պիտի զնամ... Եւստիոս

Վերմակից գուրս էր ընկած Թօրիկի կոչում ու ջղապինդ բազուկը. պատանին երկիւղած կերպով ծնրադրեց, անզգայի մի համբոյր գրոշմեց. ապա շրթները մօտեցրեց իր սիրասուն մօր վարտակալին, մի գոյգ արտասուք գլորուեցան մայրական գլխի վրայ. նա ստուերի պէս խոյս տուեց գոնից գուրս:

Նա չունէր մեծ պաշար, նա չունէր ղէնք, մի հաստ գուազան ձեռին հապշտապ գիւղից գուրս խուսափեցաւ:

Աւաւտեան իրարանցումն ընկաւ տան մէջ, յետոյ տարածուեցաւ գիւղում, սրովհետեւ ոչ մի սրտակից ընկեր չունէր, ոչ օք էլ չըզիտէր նրա ուր գնալը... Ի գուր նրա եղբայրները արձուի պէս գանազան կողմեր թռան, չըկար ու չըկար... Ո՛չ

մի աղամորզի տեսած էր նրան: Գուցէ դեռ շատ սրտնէլին, շատ ղէս ու ղէն վազէին՝ եթէ նրա գնալուց երեք օր յետոյ՝ չըզանէին հետեւալ երկտողն՝ սր դրել ու իր բարձի տակն էր թողել. —

«Էլ մի որսնէք ինձ, ես անկարձ հեռանում եմ: Ազօթեցէք, օրհնեցէք միայն, սիրելի ծնողներ, սր ետ համեմ բաղձանքիս»:

X

Աւանդում են՝ լծէ այն ժամանակի Կ. Պոլիսը, կամ Բիւզանդիօնը՝ մի հրաշաշէն բաղար էր. էլ ինչ տեսակ պալատներ, եկեղեցիներ, ապարաններ, թատրոններ ու բազիլիքներ, հրապարակներ ու ձևմեղիքներ կային՝ անկարելի է նկարագրել, պատմել սակեզօժ աշտարակների, գմբէթների մասին:

Բիւզանդիօնը լծացած էր ազգերի խուռն հոսանքներով, այնտեղ նստում էին բոլոր տէրութիւններից գեսպանները: Պարսիկ գեսպանն ունէր իր բոլոր պալատն ու ատրուշանք, հայոց գեսպանն ու արքայազուն իշխանները, օր այնտեղ էին լինում, ունէլին պալատներ և եկեղեցիներ: Այնտեղ մարդիկ իրար հագիւ էին ճանաչում, մարդկային հեղեղներ օրն ի բուն ժայթքում էին արուարձանից արուարձան:

Հայոց արքայայն գեսպանի մարմարիօն պալատի առաջ կանգնած էր մի սիրճ սակեհու գեսպակ ականակուռ բազրիքներով, ծիրանի, մետաք-

տել վարագոյրներով զարդարուած, որոնց ժանիքա-
ւար կոճակներէց ազատ դուրս կարող էր նայել
նոտող իշխանը:

Չորս թխաթոյր, հաժկուն պայիկներ, գետա-
կըն ուսերին սպասում էին:

— Իշխանն ուր է գնալու, հարցրեց մի անծա-
նօթ պատանի պայիկներէն մօտենալով. — արդեօր
չեմ կարող ներկայանալ:

— Կորիք, ստամբակ, — որոտաց մինը, — այս քա-
նի օր է՝ սրտեղից լոյս ընկար... Ի՞նչ էս կարծում,
մի՞թէ քեզ պէս դատարկասուններն յոյս ունեն ա-
րեկնափայլ արքայագունը տեսնելու...

— Մի բարկանաք, բարեկամ, — ընդմիջեց պա-
տանին, — ե լեզուիդ թոյլ մի տար ինձ դատարկա-
սուն անուանել: Ես ցանկանում եմ իշխանն տես-
նել, ոչ թէ քս գահհիկ կերպա... բա... ան... քր...

Այդ միջոցին ուժգնութեամբ ապարանքի դռ-
ները բացուեցան, ակնախտիտ, սսկով ու արծաթով
զարդարուն զգեստով, մեծազին գինգերն ականջին,
չինգզը պարանոցին, սամոյրն ուսերին, ձեռք գս-
հարաշէն սրի դաստապանին դրած, գմբեթաձև սա-
զավարտով, իրօք արեգակնափայլ, վսեմ ու ծանր
հայեացքով մի մարդ յայտուեցաւ, և պատանու վեր-
ջին խօսքը փշրեց կոկորդին մէջ իր ներկայութեամբ:
Պայիկներն իսկոյն ակնածութեամբ գետապակը մօտ
տարան: Մարդը շորս կողմը նայեց հարցնելով.

— Եյն սկ է՝ որ ինձ ցանկանում է տեսնել:

— Ես, տէր իմ, — ակնածութեամբ առաջ գնաց
ու երկրպագելով իշխանին՝ մի մազազաթ կարկա-
տեց ու ասաց. — Ձեր ծառան, մեծ իշխան, մուրա-
ցիկ չէ, ողորմութիւն չէ խնդրում, այլ մի պարզ
չնորհ, սրբիտին հասարակ է իմ արքայազն տիրոջ
մօտ...

— Ոտքի ելիք, — հրամայեց նա վէս կերպով,
մազազաթն առնելով:

Պատանին կրկին երկրպագելուց յետոյ սուրի
ելաւ:

— Անունդ ի՞նչ է, — հարցրեց իշխանը խնդիրը
կարդալով:

— Ձերդ մեծութեան ծառայ՝ Լէօն...

— Լէօն... Դա հայի անուն չէ, տգնտ:

— Չբարեմ, մեծ իշխան, ինձ մկրտողին պէտք
է հարցնել:

Գոհունակութեամբ ժպտեցաւ իշխանը.

— Լաւ, — ասաց նա, — խնդիրդ կատարուած է:

Պալատ գնահ:

Նա ծանրութեամբ գետապակի մէջ մտաւ, պա-
յիկներն ուսերն առած, ներդաշնակ բայլերով հե-
ռացան:

XI

Պատանին, — սրին այսուհետև Լէօն կանուա-
նենք, — մտաւ գետապանի պալատն և սպասեց թիկ-
նապահ զինուորների սրահում: Պանդուխտ հայ զին-
3

ուորնները շրջապատեցին նրան, սկսեցին հարցնել. Լէօն գոհացրեց նրանց հեռաւոր հայրենիքից բերած ուրախ և տխուր լուրերով, մինչև որ իշխանը վերադարձաւ:

Մի քանի ժամ յետոյ, պատանին հրաւիրուեցաւ իշխանի մօտ: Նա շշկուած էր անօրինակ պերճութեան հանդէպ: Գողգոթայի, անցաւ մի քանի սենեակներէրից, երկուցած կերպով բացեց վերջին դուռն և խնայ իրան գտաւ մի իշխանի առաջ:

Որպէս օրէնք էր, Լէօն ծնրապրեց, երկրպագեց, բայց՝ ծնրապիր սպասեց: Իշխանի սուր հոյսացրը միտած էր նրա վրայ. սակայն Լէօն գոհունի կերպով քննեց պայազատի դէմքը. նա մի գուարթագէմ, վէս զինուորական էր, թաւապատ բազմոցի վրայ:

—Ոտրի ել,—հրամայեց արքայագունն անուշ ձայնով,—պատմիր ինձ սրտեղացի լինելը, ինչու համար Գ. Պսիս գալը:

—Տէր իմ,—պատասխանեց Լէօն կրկին երկրպագելուց, իշխանի քղանցը համբուրելուց յետոյ՝ ոտրի ելնելով,—ես Մշու գիւղերից եմ, անուս շինականի գաւակ, սիրահարուած ուսման...

—Լաւ. հայաստան ուսումնաւայր չըկար, վանքերն ի՞նչ են եղել...

—Կան, իշխանդ իմ, բայց ինձ համար չեն, ես աւարտած եմ գիտնական Յովսէփ վարդապետի վարժոցը...

—Մ, ուրեմն բաւական սովորած ես...

—Եյն, տէր իմ...

—Հիմա ի՞նչ ես ցանկանում...

—Ուզում եմ այստեղ մի յայտնի դպրանոցում շարունակել և ուսումս աւարտելուց յետոյ հայրենիք վերադառնալ...

—Լաւ: Մենք ի՞նչ կարող ենք անել...

—Իշխանդ իմ, ազատ ժամերս կծառայեմ ձեզ...

—Որ ուսանելուդ օգնեմ...

—Կըյուտամ, տէր իմ...

—Եւ չես սխալուում,—ժպտալով պատասխանեց բարեսիրտ պայազատը.—դու սրամիտ պատանի, մեր հայրենիքը պէտք ունի ուսեալ գաւակների, իմ պալատում կունենաս մի սենեակ և ամեն կարևոր պիտոյք և ոչ մի ծառայութիւն: Ուսանողն ազատ պիտի լինի՝ որ սովորել կարողանայ: Վաղը կստանաս յանձնարարական և կըներկայանաս Յունաց ամենայայտնի փիլիսոփային: Գնա՛ ուրեմն.—հրամայեց իշխանը ձեռքի շարժումով:

Պատանին վերստին համբուրեց արքայազնի քղանցն ու յետ յետ գնալով գուրս ելաւ...

—Լէօնին մի լաւ, լուսաւոր սենեակ կըտաս,—հրամայում էր իշխանն իր մատակարարին,—կրտաս և՛ ուսումնական, և՛ նիւթական ամեն պիտոյք:

—Ուրեմն, տէր իմ, որդեգրած էր...

—Այդպէս համարէ: Գիտես՝ որ ես սիրում եմ համարձակ ու եռանդուն մարդիկ, այդ պատանին

համարձակ է: Մեծ աստղ է փայլում նրա ճակատին վրայ:

XII

Լէօն ստացաւ մի շքեղ սենեակ իշխանավայել բոլոր յարմարութիւններով: Կերակուրն ստանում էր իշխանի սեղանից, մի ծէր զինուոր էլ ծառայում էր նրան: Ուսումնատենչ պատանին շէր հիանում կերակուրներով և ճոխ զգեստներով՝ որ մեծափառ բարերարն էր շնորհում, նրա իդէալն էր գիտութիւնը: Նա իբրև ուսանող, շուտով սիրուեցաւ և ծանրագլուխ փիլիսոփաներից. յառաջագէժ պատանուն նոյնչափ ընտանեցաւ յունարէնը՝ որչափ իշխում էր նա մայրենի հարազատ լեզուին: Նա մինչև կէս գիշեր նստած էր լինում փոքրիկ գրասեղանի կողքին, մայրաքաղաքի յարաճուն ուրախութեան, շանյ տեսարանների ազմուկները շէին հասնում նրա ախանջին, նա խօսում էր յայտնի փիլիսոփաների, մեծ բանաստեղծների հատորների հետ. միթէ պրանից լաւ բնկեր, քաղցր անաշառ խօսող ուսուցիչ ու բարեկամ կարող էր գտնել գեղխութեամբ փշացած մայրաքաղաքի միջնայուրտում:

Անցան տարիներ, Լէօն լուս ու մուջ, յարատև աշտրջութեամբ, յամառ ու տոկուն շարունակում էր ուսումն. նրա իդէալն էր փիլիսոփայի մեծ տիտղոսը... Նրա ուսուցիչներն ու ծանօթներն հիացած էին նրանով, իշխանը ծածուկ հետամուտ էր,

լսում ու տեսնում էր, բայց՝ ոչինչ չէր յայտնում, հազիւ թէ շարաթը մի անգամ կանչում էր իր մօտ...

— Լէօն, խիտտ անձնատուր ես լինում ուսման, — ասում էր իշխանը ժպտալով, — դու ճշմարիտ ուսանող ես և մարմնացած տիպար, սակայն վատ չի լինիլ, բարեկամ, եթէ մի բիշ գրօմնես, թատրոն գնաս...

— Զբօսում եմ, մեծ իշխան, — պատասխանում էր նա, — շատ եմ թափառում աւերակների մէջ, լսում եմ այնտեղ ընկած քաջերի արկածներ:

— Հն, կարդում ես, գիտեմ...

— Գատմութեան թատրոն եմ յաճախում, լայնածաւալ բեմի վրայ՝ իրանց բոլոր լաւ ու վատ խաղերով...

— Մենամտութեանդ մասին չեմ վիճում, պատանի դու, սակայն հոգ տար առողջութեանդ: Մրտաւորական դաստիարակութիւնն ու կրթութիւնն՝ առանց ֆիզիքական մարզանքի քեզ կշլատեն, կիսամեռ կրթույնն փառքի տաճարին առաջ... Եթէ բազմակարօտ հայրենիքիդ ուխտել ես օգտակար լինիլ, քեզանից կազմել նրա փառքի մի բեկորը, նաև զինուորական մարզանք սկսիր:

Լէօն ընկճուեցաւ, համոզուեցաւ, մենամտութեան օձիքը թողեց. պարապ ժամերին սրով ու վահանով յայտնում էր փորձ զինուորների սրահում...

— Հն, այգալս, — ասում էր իշխանը, — զէներն ու գրիչն եղբայր են. մին առանց միւսին ուժեղ չէ: Զէներն առանց գրչի, գրիչն առանց զէների՝ քեզ կը-

չինքն կամ յիմար հերոս, կամ ծիւրած գիտնական,
միջցեռ երկունն ի միասին մի պսպպատաշէն ասոյեան:

XIII

Քաղաքական հանգամանքների բերմունքն ըստ
տիպեց Լէօնին մի տարի շատ նեղութիւն կրել: Մե-
ռաւ յունաց հայկազուն կայսրը, գահն յափշտա-
կուեցաւ մի յայտնի զօրապետից, որի առաջին գոր-
ծքն եղաւ հայերին հալածել: Յանկարծ Լէօնի բարե-
բար արքայազն իշխանն անհետացաւ հորիզօնից.
Նա բանտ նստեց, հալածուեցան բոլոր աչքի բնկնող
հայերը, ուստի Լէօն ստիպուեցաւ թէ ապրելու և թէ
ուսումը շարունակելու միջոցներ հայթայթել: Ի բնէ
վարժ լինելով նաև կոպիտ աշխատութեան, յօժա-
րակամ ընտրեց նա ծովափում վաճառական նաւերի
մէջ աշխատել, իրեն մի կտոր հացի զին ճարել.
ինչպէս անխռով նստում էր իշխանական ապարան-
քում նոյնպէս անփոյթ կծկւում էր մի խուլ անկիւն
ու շարունակում: Նա այժմ ուրիշ հող չունէր, բացի
հայրենիքի բախտի մասին մտածելուց: Հայ իշխան-
ների, ի մասնաւորի իր բարերարի կայանաւորու-
թիւնը ծանրապէս ճնշում էր նրա սիրտը: Նա ի
որտէ յուզւում էր հայ մարդուն եղած անարգանքին
հանդէպ, նա տեսնում էր թէ ինչպէս յոյն մեծամեծ-
ներ անարգաբար շարչարում, տանջում, ստրկաբար
ժառայութիւններ էին անել տալիս մայրաքաղաքի
բնակիչ հայերին:

Նա մի օր ակննատես եղաւ հետեւալ անարգ
տեսարանին: Մի յոյն իշխան ծակել տալով մի
տախտակ՝ մի աւոյզ հայի վիզ էր անցկացրել, ին-
քն այդ տախտակի վրայ բազմած, անբախտ բեռ-
նակրի գլխին վրայ մուրճով բնկուզ էր կտրում և
ուտելով փողոցները շրջում: Լէօնի աչքերն արիւ-
նակալեցան, բարկութիւնից ատամները կափկափե-
լով,—այս ի՞նչ եմ տեսնում,—մրմուց նա,—եթէ
ես այս լրբների յոյնին չհատուցանեմ, ես հայ չեմ
լինիլ...

Յոյն իշխանն իր բանաւոր հեծեալով գէպի
Այ—Ստեֆանո էր գնում: Նա գուրս գալով, այժ-
մեան Նտի—Գուլէի գանից՝ մշակուած արտերի մի-
ջով յառաջանում էր, ստներով հայի կողերին խը-
թելով:

—Անարգ կենդանի,—ասում էր գոռող Յոյնը,
—չտապիր քանի մուլժը չէ քեկած, եթէ ոչ՝ Մքան-
չելագործը վկայ, մարմինդ շներին կերակուր կըտամ...

—Ցած արի գրա ուսից,—յանկարծ առաջը
կտրելով ասաց Լէօն,—անմիտ կենդանի գու, ի՞նչ-
պէս համարձակում ես քս նմանին իբրև գրաստ
գործածել:

Յոյնը սարսափեցաւ. երիտասարդն ական թո-
թափել նրա վզակիթից սեղմելով լսեց, նետեց գե-
տին. իշխանը փութեցաւ սոսիսի ոտքերին տակ:

—Քեզ մորթաղերծ կանեմ, ապիրատ,—գո-
չեց նա:

Տայը՝ որ գրաստի պաշտօն էր վարում, գոգասար մի կողմ կանգնեցաւ, իսկ Լէօն ոտքը յոյնի կրծքին գրած՝ ասում էր.

— Վերջին բալէդ է, անպատճ, աստ լինջու ես շարշարում այդ հային, ինչ յանգնութիւն է վզին նստել, գլխին վրայ ընկուղ կոտորել, անլուր տանջանք պատճառել:

— Ես կայտեր ազգականն եմ. — մրմուռայ յոյնը խուստ ձայնով:

— Գրանով չես արդարանում: Մի՛թէ դա անասունից էլ վատթար է:

— Այ՛ն, որովհետեւ հայ է, — ասաց շնչատուտ, երկխօսից գոգալով:

— Լաւ ուրեմն՝ իմացիր. ես րեղ պիտի սպանելի. բայց խօսքերիդ համար որոշումս փոխեցի՝ կամենալով ցոյց տալ թէ սրբան բարձր է ամենալեւտին հայն անգամ՝ րեղ նման անասնաբարոյ իշխանից: Անասունից վատթար անուանած հայց, որի վզին դու յանգնած ես նստել, որք կարող է արեղ խաւարացնել, մի թեթեւ ոտրի հարուածով ճգմել րեղ՝ ինչպէս սողունի, րեղ ազատ եմ թողնում որ գիտենաս և հաւատաս՝ թէ յետին հայն իսկ գերազանց է յոյն իշխանից... Բայց սրպէսզի յիմարարար, կամ յունական գոռողութեամբ շրկարծես թէ վախենում եմ րեզանից, ահա ձախ աչքդ կըպոկեմ իր բնից...

Այս ասելն ու կատարելը մին կլաւ. Լէօն մա-

տով փորեց նրա աչքը, և դառնալով հային՝ խոտի հրամայեց հեռանալ...

XIV

Այս արկածը մեծ իրարանցում պատճառեց Գ. Պոլսում: Չստ որոնեցին վրիժառ հային, բայց չկարողացան, որովհետեւ՝ միջաճասակ ու զեղեցիկ հերոսը, յոյնից նկարագրուած էր ահայնատեսիլ մի հսկայ:

Լէօնի ուսուցչապետը մի ծերունի աթենացի էր, միայն նա էր՝ որ առանց արհամարանքի էր վերաբերում դէպի հայ ուսանողը. մի օր իր մօտ կանչելով ասաց.

— Լէօն, հանդէսի օրերը մօտենում են, որդեակ, և դու լիտլին ուսումդ ստացար: Յիմա հայերի համար ժամանակը վատ է, այս կայտեր օրով շէ կարելի լայն աստղարկ երեւակայել, րեղ համար դառն պատրանք միայն կայ... Բայց՝ ես սիրելով րեղ, ուզում եմ ըստ կարելոյն օգնել, ուրեմն պատրաստուելիք վերջնական քննութեան, գոնէ յաջողացնել րեղ շնորհել փիլիսոփայի տիտղոսը:

— Ե՛ս, ուսուցիչդ իմ, — պատասխանեց հայուրդին, — միայն այդ տիտղոսն եմ որոնում, աստղարկդ իմ հայրենիքն է...

— Ես պիտի աշխատեմ:

Հանգէսներն սկսուեցան: Լէօնի բոլոր ընկերները կոկիկ ու մարուր հագուած, մէկը միւրի յետեից ամբիօն էին բարձրանում, իրենց ճարտարախօ-

սուլթեամբ ունկնդիրներին հիացնում, որոնց մէջ էր երանակալ կայսրն իր շքախմբով ու պալատականներով:

Բայց՝ Լէօնի արտաքինն անմխիթար էր, մի մաշուած, ծուռտուած բեհեզ պարեգօտ ունէր հագին, ոտները տրեխներ սպիտակ գուլպաներով, մագերի սե ու յորդ ալիքը թէպէտ՝ յարգարուած, առանց անուշահոտ օծանելիքի: Ինքն արեակէզ լինելով՝ աւելի մի բեռնակիր էր բան ուսանող, բայց՝ մի շնորհալի վեհուծիւն կար թէ նրա կերպարանքի և թէ շարժումների մէջ. մի բոպէ նրան ուշագիւր բննողը կարծում էր ցեխի մէջ ընկած ոսկի տեսնել: Նա սրտատրոփ սպասում էր իր հերթին, սր խօսի, յուզէ մտքին ու գգացումները, ցոյց տայ իր բազմազմի գիտութեան մի փոքր նշանը:

Չատ շանցաւ, հերթը հառաւ: Նա գոզոզ բայլերով ամբիօն բարձրացաւ, բայց մի բոպէ սարուեցաւ: Թէատրի միջտեղը, գահի վրայ բազմած էր խոտահայեաց կայսրն Բիւզանդիօնի. նրա մօտ գոռոզ կայսրուհին, իշխաններ, իշխանուհիներ, իսկ նրանց շուրջն անհամար բազմութիւն. այդ բոլորի աչքերը, սրամուխ տէգերի պէս, սևեռած էին իր վրայ: Քրտինքն հոսեց նրա ճակատից, բայց՝ խոհոյն ինքն իրեն ամփոփեց իրեն յատուկ սառնութեամբ և սկսեց խօսել:

Մենք այնտեղ չէինք, սր յօէինք նրա խօսքը, կամ գիտենայինք թէ ինչ նիւթի վրայ խօսեցաւ, աւանդութեամբ պատմողներն ոչինչ ասած չեն այդ

մասին. բայց՝ կատենք, սր Լէօն բնգհանուր յարգանք գրաւեց, մինչև անգամ անմխ կայսրն անկարող եղաւ իր հիացումը զսպել: Իր մօտ կանչեց գիտնական երիտասարդին. գիտութեան առաջին պսակը տալով,—

—Ո՛վ և ինչ որ ես,—ասաց,—ազրանա ուսանող, ստացար առաջին յաղթանակն ու փիլիսոփայի փառքը...

Չորս կողմից ուրախաձայն զիթօ (կեցցէ) բառը թռաւ:

—Արժանի է,—խօսեցաւ ամբոխից:

XV

Լէօն յուզուած, բերկրած իր ձեռք բերած բարոյական մեծ յաղթանակով, վարձատրուած իր ներքին գոտաւորից, ամենաբջանիկ մարզու նման՝ այդ օրը մինչև երեկոյ, մտախոհ իր սակեզօծ յոյսերով՝ թափառեցաւ բազարում: Ոչ բաղց էր զգում և ոչ ծարաւ. նա յագեցած, լիացած էր ամեն բանով: Ներքին ուրախութիւնն երկնից արքայութեան ճառագայթն է, ճշմարիտ ուրախութեան երէց որդու, բերկրանքի, խնջոյքն աննիւթ խորտիկներից է պատրաստուած, հոգին նուազում է, հոգին կայտուում է, հոգին սլանում է հոգմերի թևերով, մարմինն իր ընկերի երջանիկ յափշտակութեամբ համակուած, ստեպ իր երկնային կոչումն էլ է մուսնում: Լէօն այսպէս իր փառքովն արբշխ՝ գիշերուայ

մի մասն էլ ծովափում վասնեկուց յետոյ, մերկնապէս վերագարձաւ իր բնակարանը:

Ծերունի գոնապանը գիմաւորելով նրան, զըզգոհութեամբ ասաց.

— Իմ տէրն այս ժամանակ մը էր, երբ պէտք է լինում չգիտեմ ուր է գնում:

— Ի՞նչ կայ՝ Գիտո.

— Ի՞նչ պիտի լինի, մի պճնազգեստ պայիկ բասն անգամ քեզ համար եկաւ ու գնաց, երբ տեսաւ չըկաս, այս նամակը թողեց:

Ծերունին մի մաղաղաթ ներկայացրեց պաննաձի ուրուած, կարմիր երկզով չըջապատուած ու կիրուած: Լէօն նամակն առաւ և շտապեց իր խուցը:

«Մի յայտնի անձնաւորութիւն, — գրուած էր նամակում, — կը ցանկանայ ձեզ հետ տեսնուել: Այս տեսակցութիւնից է կախուած ձեր բախտն ու ապագան: Յանուն ձեր բարեբարին, Հայոց — դետոյանին, քանի որ ազրատ ուսանող էք, առաջարկում է առաւօտուն գնալ մեծ թէլատրի դէմ, Փէօխարիտէս վաճառականի մօտ և ստել այս խօսքը — *պատրաստ եմ*. — Նա ձեզ կտայ ձեր պիտութեան և ստիճանին յարմար զգեստ, փող և ինչ որ հրամայէք. նա կառաջնորդէ ձեզ ինձ մօտ: Նամակս այրեցէք: Այս ժամադրութեան մասին ոչ որին չխօսիք. այսպէս է պահանջում ձեր բարեբարի շահը»:

— Փնօր կամ մահ, — մրմուռաց ուսանողն և նամակն այրեց:

XVI

Լէօն չըկարողացաւ գիշերն հանդիստ ննջել. սակեղօժ յոյսերն այժմ տեղի տուին մտատանջութեան, թեր ու դէմ կարծիքներ, ուրախ ու տխուր օրօրեցին նրա նինջը գիշերն ի բուն:

Առաւօտուն զարթելուն պէս Փէօխարիտէս վաճառատունը գիմեց և ներկայանալով պայմանեալ խօսքն արտասանեց:

— Ես, — ասաց հաստամարմին վաճառականն, — ձեր գալտեան՝ Տէր իմ, երեկ էի սպասում: Գուրունիք ինձ մօտ, *անսահման* վարկ, որչափ կամենաք կարող էք վեր առնել սակի... Բայց՝ նախ, ինչպէս, բարեհաճեցէք մտնել իմ առանձնասենեակը...

Փէօխարիտէսի սենեակում մի կապոց էր դրուած:

— Վեր առէք — ակնածութեամբ ասաց վաճառականը կապոցը ցոյց տալով, — գրա մէջ կը գտնէք զգեստ, զարկ և ձեր հասցէին նամակ:

Լէօն արգէն հաշտուած էր իր մտքի հետ, վեր առաւ կապոցը, բրբրեց և գտաւ հետեալ երկտողը.

«Միտելի փիլիսոփայ, խնդրում եմ առանց վիճադրութեան և անկասկած հաղնէք այս զգեստները, դէն ու զարգը, վեր առնէք ինչ գումար որ բարեհաճիք, ապա՝ Փէօխարիտէսի առաջնորդու-

Թեամբ, քնար ձեր նոր բնակարանն իբրև լշխան
ուր պիտի գանէր ծառաներ և ստրուկներ... Եւ
ինձ շուտ կրտսնէր :

Լէօն խոյն ցնցոտիները մերկացաւ. վայել-
չապէս հագուեցաւ: Մեր գէմ կանգնած է նա,
թխաթոյր և արծուի հայեացքով, մի թիչ ծռած՝
հայի քթով, նրա զգեստներն են իշխանական, հա-
մակ մետաքսեայ, և ոսկեթել անխուած՝ յունական
շուայլ ոճով: Թեերին կապեց արեգակնափայլ ադա-
մանզակուռ բազպաններ, զլիւին գրեց ոսկեղօծ
ոսպափորտ, որի բոցախուի դարգամնակը ճօճում
էր սէգ առիւծի բաշի պէս, դօտկից կախեց դոհա-
րապատ սուրբ: Նա քննեց իր դէմքն արծաթ հայե-
լու մէջ, ինքն իրենից պատկառեցաւ: Ջինուորա-
կան վէս ու խորոտ կերպարանրի արևառ գծերը,
մեղմացած էին մի տեսակ անուշ երևոյթով, որ
տպաւորած էր մտաւորական մեծ դարգացումը:

— Գնանք, իշխանդ իմ, — յարգանօք ասաց վա-
ճառականը, — բայց՝ շէլք կամենում փող վեր առ-
նել...

— Ոսկի հարկաւոր չէ, — ժպտեց Լէօն խոտիւ, —
զգեստներն էլ վեր առայ գիտենալով որ մի մեծ
ազուականի հետ է գործու:

— Գիտէ՞ր ուրեմն, — հարցրեց Ֆէօխարիտէս
զարմանքով:

— Գոնէ՞ գուշակում եմ: Երթանք:

Վաճառականն առաջնորդեց նրան: Մի քանի

փոզոցներ անցնելուց յետոյ՝ մօտեցան մի մարմա-
րաշէն ապարանքի, սրի դռան առաջ, իբր պահակ,
կանգնած էին երկու մակեդոնացիներ՝ ծփուն զգեստ-
ներ հագած, ձեռները սրերին՝ պատրաստ զգաստ
որսկանի պէս:

Լէօն ներս մտաւ, խոր ակնածութեամբ ըն-
դունուեցաւ ծառաներից. Ֆէօխարիտէս տարաւ նը-
բան մի պերճ ու շրեզ դահլիճ:

— Տէր իմ, — ասաց յարգանօք խոնարհելով, —
ձեր բնակարանի մէջն էր... Ինձ հրամայուածն ևս
կատարեցի, շարունակութիւնը ձեր գործն է, այ-
նուամենայնիւ՝ իշխանդ իմ, խնդրում եմ յիշէր ձեր
ծառայի մօտ անսահման վարկ ունենալներդ:

— Պատուական Ֆէօխարիտէս, երբէր շեմ մո-
ռանայ ձեզ և իմ վարկը:

— Ձեր պատրաստական ծառան եմ ընդ միշտ:
Վաճառականը հեռացաւ, երիտասարդն սկսեց
մեծարայլ ճեմել դահլիճի մէջ: Նա այսպիսի շուայլ
ու պերճ բնակարան տեսած էր միայն Հայոց դես-
պանին յատուկ: Մտն կարասիք, կահներ, զարդեր
մեծագին էին և հագուազիւտ:

— Օ՛ն անգր, — շնչաց երիտասարդը, — տյա տ-
ռեզմուածի մէջ՝ մեծ գերատանի դեր կատարելն
իմ գործին կրկայ, անշուշտ պիտի տեսնեմ այն
անձը, որ առանց ճանաչելու բարկը է անում՝ ո՞
գիտէ ինչից թելապրում...

Գեռ մտածում էր Լէօնները ներս մտաւ՝ մի

բարձրահասակ, ըստ երևոյթին տառն ու վեց տարեկան, վերին աստիճանի գեղանի պատանի, իշխանական բոլոր վայելչութեամբ հագուած:

— Զնորհակալ եմ, — ասաց նա յուզուած, Լէօնի ձեռքը բռնելով, — նորատի փիլիսոփայ, որ դուրկ չես և բաջութիւնից. դու յարգեցիր բեզ գրողին, ներկայացար պայմանեալ ժամին:

— Ուրեմն, իշխան գնւր էք ինձ գրողը...

— Ելլոյս համարեցէք, — սկսեց յոգնակի խօսել յոյնը:

— Զատ լաւ, ես պատրաստ եմ ձեր հրամանին.

— Զատ ուրախ եմ: Նախ և առաջ, տէր իմ, խնդրում եմ չըստնեցիք իմ պալատում, որ և ձեր սեպհականութիւնն է:

— Ի՞նչպէս կարող է իմ սեպհականութիւնը լինել, իշխան, ինձ մի շփոթէք բախտախնդիր երկտասարդի հետ. ես այս գգեստները չըպիտի ընդունելի, պիտի գայի իմ շորերով, բայց՝ բարերարիս անունը խառն լինելով այս գրամայի հետ՝ ընդունեցի, սակայն՝ պիտի մերկսնամ՝ եթէ օրինաւոր չըլտնեմ: Ուրեմն՝ ի՞նչ է այս, գրամա՞...

— Ես՝ տէր իմ, — կարմրելով, յայտնի յուզումով շնչաց չընազագեղ պատանին, — ձեզ բացատրութիւն տալու առ այժմ իրաւունք չունիմ. պիպի բնակուիք այս պալատում, ապրիք արքայավայել ճոխութեամբ, զբաղուիք ձեր սիրած գրքերով, կամ մարզանքով, մինչև որ ժամանակը գայ:

— Ո՛չ, — գրապէս ժխտեց հպարտ գիտնականը՝ ոտքի հինելով, — ո՛չ, իշխան. չեմ կարող հնազանդել ձեր հրամանին:

— Բայց... հրամայում է ձեզ:

— Ես հայ եմ, իշխան, ինձ և ոչ մի յոյն կարող է հրամայել...

— Եւ ոչ իսկ բարերարը...

— Ե՛հ, մեր գեոպանը՞...

— Նոյն ինքն...

— Ո՛հ... ո՛ւր է, ո՛ւր է այն պաշտելի իշխանը...

— Զես հնազանդում և հայրենիքիդ ձայնին, գիտնական դու, հայրենիքիդ, Հայաստանին եմ ասում, որ արիւնայի մի թէ՛տար է այս քոսէիս, որ հրի, սրի, աւերածների տակ կըհառաշէ... մի կողմից պարսիկները, միւս կողմից ներկայ մեր թագաւորուկ կայսերական տունն է կործանում նրան...

Լէօն ահակալած, լուս արձանացաւ, ինչպէս պարանակալ կորիւնն է անում մի յանկարծական ստալին գործելու համար:

— Խօսեցէք, աղին իշխան, — հեղձամղձուկ շըշնջաց նա, — խօսեցէք իմ անբախտացած հայրենիքի մասին, սիրտս տրարում է... Ես ոչինչ չըպիտեմ, լսած չեմ հայրենիքից...

— Ես, տէր իմ, — յազթանակով երկտասարդին նայելով, — առ այժմ այսքանն եմ յայտնում հայրենիքիդ և նրա մեծափառ գեոպանի անունով, որ այս պալատը ձերն է, ձերն է և Ֆէօխարիտէսի

մօտ անսահման վարկ ունէր, իսկ վազուանից կի-
մանաք ձեր ինչ գործելը...

Պատանին շնորհալի կերպով ուղջունեց ու քուրս
կլաւ. Լէօն մտքերի մէջ խորասուզուած կանգնած
էր...

XVII

Թէ ի՞նչ էր պատահած Հայաստանին և Հա-
յոց—գետպանին, որոց յիշատակն այժմ կաշկան-
գած էր երիտասարդ գիտնականին փառահեղ պա-
լատում, մի քանի խօսքով կը պատմէր:

Բիւզանդիօնի հանգուցեալ կայսրն՝ որ բարի
և ազնիւ մարդ էր, ազգով հայ, եթէ չէր օգնում
միշտ հարստահարութեան ենթակայ, սրտառուշ
տեսարանների հանդիսարան Հայաստանին, գոնէ
վնաս էլ չէր տալիս, պատուով էր վարուում նրա
արքայազն իշխանի հետ: Ափօսս, կայսրն արու-
զաւակ շունէր, միայն մի տանն հինգ տարեկան
գեղանի աղջիկ Արտէմիս անունով կայսերական
անհաստատ գահին ժառանգ էր թողնում: Յան-
կարծ կայսրը վախճանեցաւ և իսկոյն թագը իրը-
ուցեալ մի յայտնի զօրապետից: Նա իսկայն յեղա-
փոխեց երկիրն և սկսեց իր նախորդի սիրածն՝ ա-
տել, ատածը՝ սիրել. նա ընդ փոյթ բարկութեամբ
հայերի կողմը դարձաւ, բանտարկեց նրանց գե-
պանին իր շքախմբով և հալածեց յունահպատակ
հայ ժողովրդին բոլոր խստութեամբ: Պարսիկներին

չահեցաւ ընծաներով, Հայոց թագաւորի դէմ զբը-
գուեց, ինքն էլ մի կողմից պատերազմի դուրս գա-
լով, երկու կրակների մէջ մնաց Հայաստան: Նա
ցանկանում էր և հայկական թագը դնել իր գլխին...
Այս բարբարոս կայսեր հալածանքից շագատուցան
նաև ազնուական, հարուստ յոյներ, շատ զօրա-
պետներ, իշխաններ, բարձրագիւր մարդիկ կրկէսնե-
րի մէջ՝ գաղանների կերակուր, նետահարութեան
նշանակ, գահճի սաղկրին տակ ընկնում էին նա-
խատուած: Եւ հանգուցեալ կայսեր տիկինն ընկած
էր բանտ, մահ էր սպառնում և թագաժառանգու-
հուն, որ բարեբախտարար հօրը մեռած ժամուն
անյայտացած էր: Գեռ մի տարի չէր թագաւորած
այս հրէշն, երբ սկսուեցան խելացի գաւազրութիւն-
ներ, զինուորական ու քաղաքայի՝ խիստ գաղտնի
ձեռք ձեռքի տուած սպասում էին յարմար ժամա-
նակի: Հայոց գեոզանն և շատ յոյն իշխաններ
մաշուում էին բանտերի մէջ: Այս բոլորի մասին Լէ-
օն սշինչ չըզլիտէր: Ուսումնարանից վերագարձին
յոյն զօրքով զբաւած էր գտել Հայոց գետպանա-
տունը. հարցրել էր մի քանի հայերից, ոչ մի գո-
հացուցիչ, կամ դրական պատասխան չէր ստացած,
որովհետև՝ ձերբակալութիւնն յանկարծ էր եղած:
Պարզ հասկանալի է ուրեմն Լէօնի հետաքրքրու-
թիւնն ու կրաւորական հազանգութիւնը դէպի
գետպանի անունը...

—Ո՛հ,— առում էր նա հառաչելով, — իմ կեան-

բըս յօժարակամ կըզոճեմ հէզ իշխանին փոխա-
բէն... Բայց՝ ո՞ւր է, ինչպէս ազատել: Նրա խօս-
քերն արդարացի գուրս եկան. — ուսումն առանց
զէնքի մի ծիւրած գիտուն, զէնքն առանց ուսման
մի տխմար հերոս կարող են ստեղծել... հիմա ես
ոչ մինն եմ... բայց՝ պէտք է փրկել նրան:

XVIII

Օրուայ մեծ մասն Լէօնն անց էր կայնում
գեղանի յոյն իշխանի հետ. ծանօթանալով նրա
ազնիւ հոգուն՝ հետզհետէ խօսում էր ծանր խընդ-
րի մասին: Վերջապէս՝ մի օր նա հետևեալը պատմեց.

— Հանգուցեալ կայսեր մահուան ժամին, նրա
հաւատարիմ զօրապետներէից մինը, յաջողութեամբ
փախցնում է թագաժառանգուհուն և պահում մի
ապահով տան մէջ: Այժմ՝ սր այս գաղանարարոյ,
ապաշնորհ կայսրից՝ զգուած է Յունաստան, ի՞նչ
զինուորական թէ՛ քաղաքացի, ռամիկ և թէ՛ գիւ-
ղացի, պապոնի սրոշած գաւաղրութեամբ են վաճը
բազմեցնել զեռատի ժառանգուհուն...

— Ի՞նչ շատ գեղեցիկ բան կըլինի — ընդմիջեց
Լէօն, — անշուշտ իշխանուհին հայկական տրիւն կը-
րելով՝ մեր գետպանին կ'ազատէ:

— Եւ կըխաղաղացնէ հայաստանը, նրա փշա-
լից թագն իր հարազատ տիրոջ գլխին թագնելով: —
Լսիր ինձ, բարեկամս:

— Լսում եմ՝ սիրելի իշխանս, — մտերմութեամբ
պատասխանեց Լէօն:

Այդ իսկ պատճառաւ իշխանուհին արտօնու-
թիւն ստացաւ ծածուկ ղեկավարող ժողովից, ընտ-
րել իր ցանկացած մարդուն ամուսին, որ փոխա-
նակ ինքն անցնելու զօրքի գլուխ, իր ամուսնի
զօրապետութեամբ կործանէ բռնապետութիւնն ու
տիրէ ժառանգութեան:

— Վատ ծրագիր չէ:

— Իշխանուհին հաւատարիմ մարդոց ձեռօք յա-
ջողեցաւ գրել այս լուրն իր բանտարկեալ մօրը և
ստանալ նրա հաւանութիւնը: Այս դէպքը տեղի կու-
նենար հէնց այն ժամանակ, երբ գուրնութիւն տա-
լով՝ ճակատից ճարտասանի պօսկով էլր զարգարում:

— Ուրեմն այս օրերումն էր...

— Այո: Եւ իշխանուհին՝ ազատ ընտրութեամբ
սրոշեց և գաւա իր փեսացուն...

— Ուրեմն գործը կարգին է, սիրելի իշխան...

— Ըստ երևոյթին կարգին է:

— Տրամաբանապէս...

— Տարակուսելի... Մի հարց, բարեկամ: Ինչ-
պէս ես վերաբերում գէպի իմ անձնուորութիւնը:

— Ո՛հ. սիրելի իշխանիկս, քերոշս, իմ միակ
բարեկամը պիտի անուանէի քեզ, եթէ հաւասար
գիրք ունենայի:

— Իսկ եթէ կին լինէի, — ժպտելով և կարմը-
րելով հարցրեց նա:

— Ի՞նչ... կին լինէիր. — դարմանքով և աս-
շութեամբ. — անկարելի...

— Եթէ կարելի լինի, ազատ... խօսիր...

— Ես քեզ կրպաշտէի, ազնիւ իշխանիկ, այս
բանի աուր մէջ ես հիացած եմ քս ազնուութեամբ
և շնորհալի կերպով, ես չէի կարող երևակայել՝ որ
յունաց մէջ գտնուում է քեզ պէս մի հրեշտակարա-
րոյ պատանի, թէի փոքրահասակ, բայց՝ օժտուած
ազնիւ ձիրքերով...

— Լաւ շառագունած միջամտեց նա, — ձեռք
առնենք իշխանուհին:

— Անյազ քեզ եմ լսում:

— Ասացի որ իշխանուհին իր փեսացուն ընտրեց..

— Այն, բայց չէ՞ կարելի իմանալ ընտրեալի ու
լինելը...

— Սպասեցէք, պատմում եմ...

— Չատ հետաքրքիր եմ, իշխան, բայց խնդրեմ
եզակի խօսիր:

Գեռատի ասպետը գոհունակութեամբ ծիծա-
ղեցու. նրա շքնազ գէմբի վրայ փայլեց վարդագոյն
կարմրութիւն:

— Եւ սեւ կարծես՝ որ ընտրած լինի թագուհին:

— Անշուշտ մի մեծ յոյն իշխանի...

— Ո՛չ, նա մի հայի է ընտրել...

— Հայի, — հիացած գոչեց Լէօն վեր թռչելով:

— Այն, բարեկամ, մի խելացի, գիտուն, ճար-
պիկ ու քաջ հայի ընտրեց:

— Իշխան, դա մի մեծ բախտաւորութիւն է
մեզ համար. .

— Իշխանուհին, — շարունակեց գեռատի ասպե-
տը իր մագնիտացիոն հայեացքը Լէօնին յառած, —
իր ընտրած անձի մասին հայտնի գեսպանին յայտ-
նեց, որին դու պաշտում ես, Լէօն, միայն ոչ մեծ
արքայազնի հաւանութիւնն, այլև այսպիսի մի գո-
վեստ ստացաւ. — «այդ ազնիւ, գիտուն, անվախ յա-
մառ պատանի, — զրում է նա, — ստեղծուած է հա-
յոց լեռանց վրայ յատկապէս կայսրութեան և ձեզ
համար՝ իշխանուհի»... Հիմա, լէօն, ասա ինձ, ո՞վ
է այդ աննշան ծագումով հայ պատանին՝ որ յու-
նաց թագի հետ յափշտակած է առանց գիտենալու,
գեղանոյշ Արտէմիսի սիրտը... Ո՞վ է՝ որ շուտով
պիտի բազմի կայսերական գահ...

Լէօն կատկածով գունատած ասպետին նայեց:

— Բարեկամ, — շարունակեց յոյն պատանին, —
իշխանուհին չբարեց իշխաններու, ինքն է իշխանու-
թեան պարզեատուն, նա ընտրեց իրանից բարձրին...

— Իրանից բարձրին, միթէ կայսրուհուց բար-
ձրը ազնուական կայ:

— Գիտութիւնը:

Լէօն այլայլած ոտքի ելաւ, վեր ու վար շրք-
ջեցաւ, յանկարծ կրնկի վրայ գառնալով, կանդնե-
ցաւ գեռատի իշխանի առաջ:

— Բայց, — ասաց նա գոզգոջուն ձայնով, — կայ-
սերական թագը գիտութեան հետ հզօր ձեռք է

պահանջում... վեհացուն ունի ձեռք:

— Պողոտա է ձեռք, հրկաթ է մատներ: Նա
տախտի չափ վեհանձն է, սատանայի չափ հպարտ
է, նա իր ազգը նախատող մի յոյն իշխանի, ներ-
կայ կայսեր սիրելոյն ձախ աչքը մի մատով փորեց...

Մի գարմանքի ժպտ ու սարսուռ նկատուե-
ցաւ Լէօնի գէմքի վրայ. ստները կ[մտտեցան, դո-
պահար ընկաւ բազմոցի վրայ, ապշած խօսակցին
նայեց, և այլայլուն ձայնով ասաց.

— Ինչպէս երևում է, փոքրահասակ իշխան,
դու ոչ միայն պետութեան խոշոր գէմքերից մինն
ես, այլև ծածկատես լինելու գիտութիւն ունես...
բայց՝ ինչպէս չըհայածուեցայ, հասկանալի է:

— Այդպէս համարենք, ուրեմն հասկացար ըն-
տրեալի նի լինելը...

Ո՛հ, — բացականչեց պատանին աշխուժով, —
պարզ է... բայց՝ իշխան. ուր է Արտէմիո... Կարո՞ղ
եմ սիրել նրան... Չըլինի հէնց չընազ Արտէմիո
աստուածուհիին լինի...

— Մի տարակուսիր, Լէօն, դու սիրում ես նը-
րան, կամենաս տեսնել:

— Կամենա՞լ... Ես նրա ծառան եմ: Ես չեմ
չլանում փոռքի, թագի փայլից, ոչ. անհունս երախ-
տապարտ եմ թագուհուն, բացի ինձ իր անձն ա-
մուսին ընծայելուց, որին՝ ասում ես կարսզ եմ սի-
րել, նա ինձ միջոց կըտայ իմ բարերարն ազատելու,
որի շնորհիւ գիտութիւն ստացայ, միջոց կըտայ

[թշուառ հայրենիքս անգորրելու:

— Լէօն, — շարունակեց իշխանը, — իշխանուհին
չլացաւ քո գիտութիւնից, առնական շքեղ գէմքից
ու գործից, որ բռնել էիր այժմ աշապուրկ յոյն
իշխանի հետ. իշխանուհին ծպտեալ քո բնութեան
ներկայ էր, երբ քեզ բռնակալը գիտութեան պտակն
չպրտեց կոպիտ խօսքերով, իշխանուհին իր գիկն
ու թագը ստրիղ տակ գրեց անհուն սիրով... Նա
յայտնեց իր համախոհներին. դու նամակ ստացար
և շնորհակալ եմ, որ անկասկած եկար իմ և քո
պալատը... Իշխանուհին՝ Լէօն, այս մի քանի օր-
ուայ ընթացքում տեսուեցաւ քեզ հետ, ի մօտոյ
բնեց, շօշափեց զգացումներդ ու քեզ բոլոր սրտով
սիրեց...

— Ինձ հետ, — տարակուսանքով ասաց նա, —
Արտէմիո ինձ հետ տեսուեցա՞ւ:

— Գու էլ նրան ես սիրում, Լէօն, անա այս-
տեղ է Արտէմիո:

— Նա այս ատելով գլխից նետեց սակեղօծ սա-
ղավարտը, արծակ մագերի հիւտերը, դարանակալ
օձերի պէս փռուեցան ուտերի և թիկունքի վրայ,
խոկոյն մի սև շրջանակի պէս պարուրեցին նրա
չնաշխարհիկ գէմքը. նա Լէօնի կրծքին ընկնելով
ասաց.

— Մի քանի օր շատ լացի քեզի համար. պաշտե-
լիս, լացի ոչ թէ տրտմութեան արտասուքով, այլ
բերկրանքի՝ տեսնելով՝ որ դու էլ կարող ես ինձ սիրել:

—Ո՛հ... դու Արտէմիս, դու ինձ փորձեցիր...
[Ժէն ես կասկածում էի, ճն անդր երջանիկ լինենր,
սիրելի:

— Բախտաւորեցուր գիտութեանդ հայրենիրը...

XIX

Քիւզանդի՞ծն տօնական զգեստ էր հագած,
բազմութիւնը խուռներամ գէպի կրկէս էր գիմում,
ուր պիտի գլխատուէին հանդուցեալ կայսեր կլինը
և արքայազն իշխան Հայոց գէսպանը, դազաններից
պիտի պատառտուէին և մի բանի յոյներ ու մա-
հապարտներ: Այդ շարժման, այդ կենդանութեան
մէջ մի պայտնիր էր թաղուած. խորհրդաւոր շը-
շունչներ, նշանացի խօսակցութիւններ ամբոխի և
գօրքերի այլերներին մէջ տեսնուում էին յայտնապէս.

Զօրքն շրջապատեց կրկէսն, ուր և կայսրն և-
կաւ իր շքախմբով:

Մի խումբ պահապաններով շրջապատուած
բերուեցաւ մահապարտ կայսրուհին. ծանր էր ա-
ռաջանում սպտոսիլ թափօրը, երբ բերուեցաւ կա-
ռափնարան, որ կայսեր օթեակի առաջն էր. միւս
կողմից էլ երևեցաւ երբեմն վեհապանձ Հայոց—
գէսպանը, մահուան ցուրտ արհաւիրքով հազիւ գէմ-
բըն ողսպուած:

Յանկարծ ճեղքուեցաւ ամբօխը, ինչպէս Կար-
միր ծովը Մովսէսի առաջ, ակնածութեամբ արձանա-
ցան հազարաւոր գլուխներ, ի մեծ զարմացումն

բռնակալ կայսեր՝ երևեցաւ մի երիտասարդ կայսե-
րական զգեստով մի բանի հարիւր սպառազէն այ-
բուձիով շրջապատուած:

— Կէցցէ օրինաւոր կայսրը, մահ բռնակալին,
— սրտոտացին կրկէսը շրջապատող գօրականը, երբ
այս թափօրը տեսան:

— Անկցի բռնաւորը, մահ բռնաւորին, — արձա-
գանբեց ամբօխը:

Բռնակալ կայսրն ապշած՝ շրջապատէր ինչ անեկ,
երբ հէնց իր թիկնապահներից մինը՝ թագը վեր-
ցրեց գլխին, ատելով.

— Բռնակալութեանդ օրերն անցան, մերկացիր
ծիրանին:

Վայրագ կայսրը ընդստ վեր թուաւ, թրով
կիսեց յանդուզն թիկնապահի գլուխը, բայց՝ ի մեծ
ցաւ իր սրտին, յանկարծ ինը զինը բռնուած զգաց
ուժեղ ձեռներից:

— Զինուորներ, — հրամայեց կրկէսն ալեկոծող
երիտասարդը, որ կայսերական զգեստ էր հագած,
ցոյց տալով բռնակալ կայսրն, — բռնեցէք դրան,
վայր բերէք:

— Անկցի բռնաւորն, մահ բռնաւորին, — գո-
ռում էր ժողովուրդը:

Կայսերական մի բանի հաւատարիմ թիկնա-
պահներ իրենց տիրոջ օրինակին հետեւելով՝ մի քիչ
խռովեցին կրկէսը, ոմանր մեռած, ոմանր վիրաւոր
ընկան միւսներն էլ անձնատուր եղան:

Բռնակալ կայսրը կաշկանդուած կառավինարան իջեցրին: Այդ միջոցին հերոս երիտասարդն առաջացաւ դէպի մահապարտ կայսրուհին, ծնրադրեց նրա առաջ, ձեռներն համբուրելով առաց բարձր ձայնով.

— Ազատ էք, մայր կայսրուհի, ձեր սրգին կազատէ ձեզ...

— Ա՛հ... Լէօն, դո՛ւ ես, — շշնչեց կայսրուհին և ուրախութիւնից մարեցաւ: Լէօն թիկնապահներին հրամայեց կայսերուհուն պատգարակով հեռացնել: Նա վազեց դէպի դեռպանը, մի ակնթարթում րակեց կապանքն ու նրա վիզին ընկնելով, լաց լինելով ասաց.

— Ո՛հ, իմ մեծ-իշխան, գիտցէք թէ մի տարի հոգու խորքից որքան ցաւած եմ ձեր վրայ, կընեքէիք՝ որ հինգ օր ուշ ազատուեցար...

— Այդ գո՛ւ ես, որդեակ իմ Լէօն, — հիտոթափուած պատասխանեց դեռպանը փոխադարձ համբոյրով, — դու իմ կեանքն ես ազատում հէնց այն րօպէին, երբ ես ինձ երկինքն էի կարծում...

— Իմ կեանքն ձերի փոխարէն իսկ գոհել պատրաստ եմ, մեծ իշխան:

— Ազնիւ սիրտ, ճշմարիտ մարդ...

— Պայիկներ, — գոչեց Լէօն, — չայոց մեծ իշխանն իր շքախմբին միացուցէք, առաջնորդեցէք իր սեպհական պալատը...

Անկեալ կայսրը կատաղի աշքերով տեսնում էր ու լսում:

Դեռ չէր վերջացած դուռ ու գոշը, երբ Լէօն հրամայեց լռել. մի քանի րօպէի մէջ թագաւորեց խոր լուծիւն...

— Բռնաւոր դու, — ասաց Լէօն խօսքը գերի կայսեր ուղղելով, — դու առանց խղճի խայթի շատ անմեղ արւեն թափեցիր, այսօր պիտի զուարճանալիր թագակիր գլուխները ընկնելը տեսնելով, բայց՝ Աստուծոյ անխմանալի կարգադրութեամբ գահն իր օրինաւոր տիրոջ արժանացաւ: Պէտք էր քեզ քու պանել, բայց՝ օրովհետեւ քս բոլոր կողտուլթեամբ մի օր գնահատած ես հանճարը, այն՝ «ով որ է» երիտասարդ փիլիսոփան կեանքդ քեզ է պարզեւում: Չեմ ուզում իմ կայսրութեան առաջին ժամուն քեզ սպանել, կեանքդ քեզ, — շքախմբին դառնալով, — գերծել սրած գլուխն ու բեխերը, նետել մի վանքի անկիւն:

— Ժողովրդից ոմանք նախատել ցանկացան ընկած կայսրին, Լէօն խօսքը բազմութեան ուղղելով՝ տիրաբար հրամայեց.

— Յարգել անկեալ վեհափառութիւնը, ո՛չ մի խօսք չասել:

Գահինները շրջապատեցին կայանաւոր կայսրին ու տարան. իսկ Լէօն իր ձին հեծաւ, ժողովրդի բուռն ծափահարութեամբ, կեցցէներով զիմեց պալատ, ուր սպասում էր Արաթմիս:

Լէօնի կրկէս մտած ժամին, մի լէպէօն զօրք յարձակուել էր կայսերական պալատի վրայ: Խոր-

տակեցին, կործանեցին բռնակալի հետքերը, գահը պատրաստեցին օրինաւոր տիրոջ համար: Իշխանուհին Արտէմիս այս անցրից յետոյ՝ պայատ գնացած սպասում էր Լէօնին:

Մայր եկեղեցւոյ զանգակները զօգանջում էին, Բիւզանդիօն մեծ ուրախութեամբ պշուցած՝ Այա-Սոֆիա էր նայում: Պայտօից զուրս եկան երիտա-սարդ կայսրն ու Արտէմիս կայսրուհին, մտան փառահեղ կառքի մէջ, և շրջապատուած մի քանի հազար սպանազէն այրուձիւով, եկեղեցի գնացին:

Պատրիարքը, որ թշնամի էր բռնակալ կայսեր, — օրհնեց, Մեծն Կոստանդին կայսեր թագը դրեց Լէօն հայկազնի պուխն, օծեց նրա ճակատն և ինքըն եղաւ առաջին հաւատարմութիւն ուխտող ու երկրպագողը նորատի կայսեր: Ապա մեծամեծ իշխանները ու գորապետները կրկնեցին երգումն ու երկրպագութիւնը:

Հանդիսականների մէջ առաջին տեղն էին զըրաւում մայր կայսրուհին և Հայոց դեսպանը:

Լէօն՝ այն, կայսր եղաւ, բայց նա ջրափուռ տնկուած դրդումի պէս չըփրուեցաւ, առանց կայսերական մեծափառ պիրքը նուատաքցնելու, ուսկացնելու, յարգանօք և սիրալիր վարսեցաւ շրջապատողների հետ: Հայոց դեսպանին վերադարձրեց յարբունիս գրաւուած ինչքն ու ստացուածքը. նրան յատուկ ուսձիկ սահմանեց և խնդրեց՝ որ միշտ պայտն այցելէ:

— Զեր մեծութիւնը, — մի օր ասաց գնապանը, — հէնց գահակալութեան սկզբնաւորութիւնից ցոյց տուեց վարչական հմտութիւն:

— Դուք էլիք ասում, մեծ իշխան, — թէ ուսումն ու պէնք պէտք է զուգափառ փայլեն անհատի վրայ: Ես ձեր խորհրդի մարմնացումն եմ...

XX

Կայսեր գահակալութիւնն սկսուեցաւ երջանկութեամբ, ուստի ցանկացաւ աշխարհին երջանկութիւն: Զուտով կայսեր միջամտութեամբ խազալութեան դաշն կապուեցաւ Հայոց և Պարսից հետ: Մի քանի զերապետներ էլ արևմուտք ուղարկեց, վասն զի վայրենի ազգեր պղտոր հեղեղի պէս խուժեղ էին Եւրոպա և թագերն իրար ետևից խորտակում:

Արտաքին աշխարհավարութիւնից յետոյ, նա ձեռնարկեց ներքին բարեկարգութեան, մի խումբ օրէնսդիրների յանձնեց բննել հին թագաւորների օրէնքները, և պիտանիներն հաւարելով մի օրէնսդրութիւն խմբագրել...

Նրա օրով շատ բիշ էին պատահում մահուան պատիժներ, ամեն տեղ աշալուրջ հսկողութիւն կար:

Մի անգամ կայսեր ներկայացուցին մի մահա-վճիւ, որ ուշադիր կարգաց. գա մի հայ աւագակի շահատակութիւնների արձանագրութիւնն էր. ուստի պէտք էր միայն կայսերական թոյլութիւն,

և ահա նրա գլուխը պիտի բնկնէր...

— Ինձ մօտ բերէր այդ աւաղակը, — հրամայեց կայսրը կարգալուց յետոյ:

Գէո ժամ յետոյ՝ ձեռներն ու ստները չզլծալակապ, ներս բերուեցաւ մի անձնեայ երիտասարդ, կայսրը վերէն վար քննելով՝ հարցրեց.

— Ո՞ր երկրացի ես գու...

— Հայաստանցի. — պատասխանեց աւաղակն անյողգող:

— Ո՞ր գաւառից ես սր զիւզից:

— Ես, Տէր արքայ, Մշու գաշտից, Խառ գիւղից եմ...

— Անսնոց, — յօնքը պուտելով և խտիր:

— Անտին Արամ է:

Կայսրը մտածման մէջ բնկաւ, մի բանի բռպէ մտայնոյ ճեմեց վեր ու վար, ապա նրա առաջ կանգնելով, հարցրեց.

— Ճանաչո՞ւմ ես ձեր գիւղացի հասոյեց Թօրիկ տանուակը...

— Մեր դրացին է, Վեհափառ Տէր...

— Կենդանի է նա, ապրո՞ւմ է նրա ամուսին Նունէն:

— Զորս ամիս առաջ կենդանի էին, բայց՝ այժմ չըզլտեմ...

— Լաւ. կարճ խօսքով պատմիր ինձ նրանց վիճակը:

— Մի ժամանակ Թօրիկ հարուստ էր, ցաւը

կատորեց նրա ոչխարն ու տաւարը, ապա իրար ետեից մեռան վեց սրգիբք՝ լծայնելով Թօրիկին մի խոււր մանր գաւակներ:

Վեցն էլ մեռան. զողահար հարցրեց կայսրը:

Վեցն էլ, Տէր արքայ, երկուսը վերջին պատերազմին մէջ, միւսներն էլ մահ տաւրաժաւից (ժանտախտ):

Թօրիկ էլ սրգի չունի...

Մի սրգի էլ ունէին, աւաղ, երանի ևս նրա խօսքին լսէի, այժմ այս չզլծաների մէջ շէի հեծեծիլ, — ունէին մի սրգի, վերին առախճանի սուտմնասէր, ազնիւ. նա անյայտացած է... Ծերունի ծնողներն միակ յոյսն է նրա վերադարձին սպասել. բայց՝ զուր են սպասում, ևս էլ մի կողմից շատ սրտնեցի նրան որ յորդորեմ հայրենիք վերադառնալ, խնամել ծնողներին չըզլանայ, խուղարկեցի բոլոր Յունաստան և...

— Կարողացար գտնել, — ժպտելով ախրութեամբ, այլալած, մայրենի լեզուով ասաց կայսրը:

Արամ հիացած յետ յետ գիտաց: Կայսր հրամայեց նրա կապանքը լուծել: Աւաղակը կրաւորական հնազանգութիւն ցոյց տուեց, առանց կայսեր մտիկ տալ համարձակելու:

— Արամ, — ասաց կայսրը, — յոնցանքդ ներստմ է և կեանքդ քեզ. կրատանաս իմ տէրութեան մէջ քեզ յարմար և լաւ պաշտօն, յատուկ գորտխմբով կրչարձակուես և կըկարծանես աւաղակների սրջեր:

Այսպէս ուրեմն՝ Արամ, քո մանկութեան, «*յիմար ստամբակ Վըթնէն*» է անում այս բոլորը:

—Տէր արքայ,— ծնրազրելով մրմռաց նա,— մանկութեան յիմար և ստամբակ կարծուածն իմաստուն ինքնակալ գարձաւ... Ներեցէք ինձ...

—Ե՛ր, Արամ, սորի ել, այս կայսերական գահին ու ծիրանին գու ինձ համար պատրաստեցիր, գու ինձ տուիր սուրն ու գայիսօնը, գու ես՝ որ մեծարանութեամբ ինձ մեծացրիր, բայց՝ ափսոս ինրդ խոնարհեցար մինչև դժուժ աւազակութիւն:

XXI

Մշու գաշաք՝ վերջին սրտերագմից յետոյ Յունաստանին էր մնացած՝ մի քանի հայկական գաւառների հետ, հարկատու էր կայսեր, ուստի կառավարող իշխանները կախումն ունէին Բիւզանդիօնից:

Գարնան վերջին յանկարծ լուր տարածուեցաւ Խաս գիւղում, թէ Յունաց Լէօն հայկազուն կայսրն այցելութեան է ելած, հայկական քաղաքներն ու բերդերն է քննում, թէ այցելելու է և Խաս գիւղին:

Մեծ իրարանցում սկսուեցաւ: Մարտը բնակարան Լին պատրաստում, գիւղը գրօշակներով պարգարում, բնաիր ստեղծիւներ պատրաստում: Այս բոլոր իրարանցման ժամանակ՝ միայն խեղճ Թօրթիկ էր անտարբեր. նա պառաւ Նունիկ հետ նստած՝ իր սև օրերն էր սղրում:

Մի օր որբան զարմացաւ սգաւոր ծերունին, երբ գիւղի տանուտէրն անձամբ գալով, խոր յարգանքով սղջունից յետոյ ասաց.

—Ափէ—Թօրթիկ, բեզ մի լուր ունիմ հագորդելու:

—Խէր լինի, տանուտէր,— հառաչելով հարցրեց ծերունին,— ի՞նչ լուր:

—Յունաց կայսրը գալիս է...

—Ինձ համար ի՞նչ... Ես մի ծերունի, աղքատ, անպէտք մարդ եմ:

—Գու լսած կըլինիս՝ որ լաւ տուն էին պատրաստել, բայց հիմա հրաման ստացայ քո տան մէջ պատրաստութիւն տեսնել, երեկոյեան այստեղ է լինելու մեծանուն կայսրը...

—Յունաստանի կայսրն իմ տան մէջ,— հառաչեց ծերունին յորդ արտասուր թափելով,— ափսոս, տանուտէր, իմ աղքատ ժամանակն է, եթէ ոչ զրլխսպատառ կընդունէի մեծ հիւրին...

—Բայց՝ ափէ—Թօրթիկ, ամեն բան մենք հոգացել ենք...

—Հէնց այդ է ինձ լացացնում, խորապէս խուցսում, տանուտէր, գառն է ինձ իմ տան մէջ օտորի հացով կերակրել հզօր կայսեր:

—Ինչևիցէ: Իմացած լինիս, երեկոյեան այստեղ է լինելու. հիմա գործաւորներ կըզան, տուներ կըմարքեն, գորգեր կըփռեն...

—Թօրթիկի տուներ մրջնոց գարձաւ, հարիւրա-

ւոր մտտ ու ել անոյնի կային. արագապէս տու-
նը պատրաստուեցաւ, զարդարուեցաւ, լցուեցաւ ա-
ստա պաշարով: Բանալթեամբ, ոչ թէ համոզելով
Թօրիկին ու իր պառաւին էլ հագցրին մարսւր շորեր:

XXII

Իրիկնազմին սոջ Մշու գաշտը ոտքի էր կանգ-
նած. ծեր, մանուկ, այր ու կին՝ խմբեր կազմելով
վազում էին կտրուրից կտուր, դէպի ճանապարհի
մօտերը, սրտեղից անցնելու էր ինքնակալը:

Մի քանի ժամ յետոյ, Մշու կոզմից նրեկցաւ
մի վարար գետ, դա սպառազէն զօրքի շարքն էր,
սր յորգան կտար դէպի Խաս գիւղ, որոնց սուր նի-
զակները, սրերը, սաղաւարաններն ու պնծակուռ
աստղարները փայլատակում էին արեի վերջին ցոյ-
րերով: Նրանց մէջ աչքի էր ընկնում կայսերական
սակեկուռ կառքը, մակեգոննացի սպիտակազգեստ
թիկնապահս գնդով շրջապատուած:

Գիւղի մուտքից մինչև Թօրիկի գուռը փռուած
էին զօրգեր ու կարպետներ, շաղ տուած հայոց
փարթամ ծաղիկները, որոնց վրայից անցաւ կայ-
սերական մեծափառ թափարը:

Թօրիկ ձերունի լինելով, գաւազանին կռթնած
կանգնած էր դրան առաջ, նրա մօտն էլ տանու-
տէրը բռնած իր ձեռին մատուցարանով ազ ու
հաց, հայի սովորական պտակն իր վեհապետին
նուիրելու.

Ահա մօտեցաւ ազմուկն ու զգորդը, լուռ է
զէնքերի շկայիւնը, շօնից է բարձրանում, յանկարծ
արագընթաց կառքը կանգնում է. նրա միջից զուրս
է թռչում փայլակների պէս շողշոյուն երիտասարդ
կայսրը, մօտենում է ձերունուն և տանուտէրին:

Բայց՝ Բիւզանդիոյ ինքնակալը տխուր էր և
գունատ:

— Ճաշակում եմ ձեր ազ ու հացը. — ասաց
կայսրը ժպիտով. խեղոյն Թօրիկի շորացած ձեռն
իր ափի մէջ աւնելով՝ խօսքը նրան ուղղեց, — կար-
ծեմ, ձերունի հայր, դու ինքդ ես իմ հիւրընկալը:

Մինչդեռ թարգմանն հայերէն էր փոխադրում
կայսերական խօսքը, մի սուր ազմուկ բարձրացաւ:

— Վայ, իմ Վրթնէ, վայ, իմ աչքի լոյս որդի,
դու իմ բալա ջան, քս արեուն ու եկած ճանա-
պարհին մատաղ...

Պառաւ Նունէն այս խօսքերն անելով՝ կարծես
երիտասարդացաւ. զարմանալի արագութեամբ, դի-
ւահարի պէս դէպի կայսրը խոյացաւ, թիկնապահ-
ներն կամեցան կտտեցնել, բայց գերբնական ուժ
ստացած Նունէն արդէն հասաւ, փարեցաւ երիտա-
սարդի կրծքին ու նուաղեցաւ:

— Այ, տնարանդ պառաւ, ի՛նչ ես անում, —
մրմնաց Թօրիկ շշկուած:

Թիկնապահ, հանդիսատես ապշած էին. կայ-
սրն անդիմտողիբ, արտասուալից տշերով՝ անձնու-
տուր եկաւ պառաւին, պահեց նրան իր կրծքին

սեղմած՝ որ վայր չ'ընկնի

— Չես սխալուում՝ մայր իմ, — հեծեծեց նա հա-
յոց լեզուաւ, — ես եմ, այն, անուշ ծնող, ես եմ քո
կորած Վրթնէն...

— Վրանէն, — ոգրալով գոչեց ծերունին ծնկի
գալով, — դու՛ մեծ կայսր, դու Վրթնէն... Բու իմ
կորած աչքի լոյսը... Օ՛, ես ուրախութեամբ կը
մեռնեմ...


— Ես եմ, սիրելի հայր, քաջացիր՝ ներս գնանք:
Էլ ո՞վ կարող է նկարագրել ծնողների և հա-
մագիւղացիների ուրախութիւնը: Վայսրը մի քանի
օր մնաց Խառ գիւղում, ապա իր ծնողներն ու սր
բերը հետն առած՝ Բիւզանդիոն վերադարձաւ:

Աղիւ նախանձը, ճշմարիտ հպարտութիւնը՝
նրան երկրագործի մաճից հեռացրին՝ կայսերական
զահի վրայ բազմացուցին...



Վ. Ս. Զ.





« Ազգային գրադարան



NL0361531

54.321

